

ՍՈՒՐԻԱ ՄԱԿ-ԷՆ ԵՒ ԱՂԱՆՈՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԷՆ ԿԸ ԴԱՅԱՆՋԷ ԴԱՏԱԴԱՐՏԵԼ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՎՐԱՅ ԻՍՐԱՅԷԼԻ ԱԶԱԲԵԿՉԱԿԱՆ ՅԱՐՁԱՎՈՒՄԸ

Դամասկոս, ՍԱՆԱ- Իսրայելի կողմէ Դամասկոսի շրջակայքի հրթիռակոծումէն ետք, Սուրիա ՄԱԿ-ԷՆ եւ Ապահովութեան Խորհուրդէն պահանջեց դատապարտել Իսրայելի ահաբեկչական յարձակումը եւ անյապաղ պարտադրել Իսրայելը դադարեցնելու թշնամական քաղաքականութիւնը, վերջ տալու իր ոճրարարքներուն եւ հաշուի կանչելու զանոնք իրականացնողները:



Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ մը յայտնեց. «Իսրայելի զաւթիչ իշխանութիւնները 7 Օգոստոսի արշալոյսին, ժամը 2:20-ին ոճրային իրենց արարքը ի գործ դնելով սուրիական Կոլանի բռնագրաւեալ հողերէն հրթիռակոծեցին Դամասկոսի շրջակայքի կարգ մը կէտեր, որուն հետեւանքով 4 զինուոր Նահատակուեցաւ, 4 ուրիշներ վիրաւորուեցան եւ նիւթական վնասներ արձանագրուեցան:

«Իսրայել, ինչպէս նախապէս այնպէս ալ այս ժամանակաշրջանին, տարածաշրջանի եւ աշխարհի խաղաղութեան ու ապահովութեան սպառնացող վտանգ կը համարուի:

«Սուրիա խստիւ դատապարտելով Իսրայելի ահաբեկչական այս յարձակումը, որ կը համարուի յանցագործութիւն եւ միջազգային օրէնքի ու մարդկային իրաւունքի կոպիտ խախտում, անգամ մը եւս կոչ կ'որոշէ ՄԱԿ-ին եւ Ապահովութեան Խորհուրդին դատապարտելու այս յարձակումը եւ շարունակուող նման գործողութիւնները: Սուրիա կը պահանջէ անյապաղ միջոցներու ձեռնարկել եւ ստիպել Իսրայելը եւ անոր սատարող կողմերը հրաժարելու թշնամական քաղաքականութենէն եւ յարգելու ՄԱԿ-ի կանոնադրութեան դրոյթները»:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՅ ԴԱՂԱԿԱՆ ՆՈՒՐԱԿԸ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՎԱՏԻԿԱՆԻ ԸՆԴՈՒՆԱԿՈՒՂ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԵՒՐ Է ԱՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՐ»

Երկուշաբթի, 7 Օգոստոս 2023-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքին մէջ, Վեհափառ Յայրապետը ընդունեց այցելութիւնը Պապական Նուիրակ Փառլոյ Պորճիա եպիսկոպոսին:

Աւելի քան մէկ ժամ տեւած հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկելու Լիբանանի նախագահական ընտրութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Վատիկանի միջեւ յարաբերութեան առնչուած եւ այլ միջ-եկեղեցական հարցեր:



Վեհափառ Յայրապետը յատուկ կերպով Պապական Նուիրակին ուշադրութեան յանձնեց անելի քան 8 ամիսներէ ի վեր Ատրպեյճանի կողմէ շրջափակումի ենթարկուած Արցախի պարզած ներկայ կացութիւնը: Արամ Ա. Կաթողիկոս յիշեցուց, թէ «հայ եկեղեցին ու հայ ազգը միշտ երախտապարտ եղած են Յայաստանի ու Արցախի գծով Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապին եւ ընդհանրապէս Վատիկանի զօրակցական կեցուածքներուն ու արտայայտութիւններուն նկատմամբ: Գիտենք, որ Պապը Արցախի շրջափակման առիթով իր մտահոգութիւնը յայտնած էր ու շեշտած՝ կարելի փութով անոր վերջ տալու անյետաձգելի հրամայականը»: Շարունակելով իր խօսքը Յայրապետը ըսաւ. «Մեր ազգին ջերմ սպասումն է, որ Արցախի նկատմամբ Վատիկանը շարունակէ զանազան կերպերով իր զօրակցութիւնը արտայայտել, յատկապէս միջազգային շրջանակներէն ներս»:

Պորճիա եպիսկոպոսը մօտէն տեղեակ ըլլալով Արցախի հարցին, խոստացաւ Վեհափառ Յայրապետին մտածումներն ու սպասումները շուտով փոխանցել Վատիկանին:

ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՅԱԼ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

«Ապառաժ» - Արցախի Յանրապետութեան (ԱՅ) Ազգային Ժողովի (ԱԺ) պատգամաւորներու նախաձեռնութեամբ 7 Օգոստոսին գումարուած է ԱՅ ԱԺ արտահերթ նստաշրջան՝ ԱՅ ԱԺ նախագահի ընտրութեան օրակարգով:



ԱՅ ԱԺ նախագահի տեղակալ Գագիկ Բաղունց շնորհակալութիւն յայտնած է Արթուր Թովմասեանին՝ խորհրդարանական աշխոյժ գործունէութեան, վերջին տարիներուն Ազգային Ժողովի նախագահի պաշտօնին կատարած աշխատանքներուն համար:

ԱՅ ԱԺ նախագահի թափուր պաշտօնի համար «Ազատ Յայրենիք-ԶՄԴ» խմբակցութեան կողմէ առաջադրուած էր «Յայ Յեղափոխական Դաշնակցութիւն» խմբակցութեան պատգամաւոր, ՅՅԴ Բիւրոյի անդամ Դաւիթ Իշխանեանի թեկնածութիւնը:

Յիմնաւորելով առաջադրուած թեկնածութիւնը՝ ԱՅ նախագահ Արախիկ Յարութիւնեան կարեւոր համարած է Դաւիթ Իշխանեանի մարտական ու քաղաքական ուղին:

«Ազատ Յայրենիք-ԶՄԴ» խմբակցութեան ղեկավար Արթուր Յարութիւնեան ներկայացուցած է թեկնածուին կենսագրական տուեալները:

Ելոյթ ունենալով ներկաներուն դիմաց՝ Դաւիթ Իշխանեան շնորհակալութիւն յայտնած է այս վճռորոշ պահուն պատասխանատու պաշտօնը իրեն վստահելու համար:


Շաբ.՝ էջ 3 ➔

ՀՅԴ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ ՅԱԿՈՒՑԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ. «ԱՐՅԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՆՎՏԱՆՔՈՒԹԻՒՆԸ, ԲԱՐՕՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ»

Դաւիթ Իշխանեանի Արցախի Յանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ ընտրուելուն առիթով, «Ապառաժ» հետեւեալ հարցումները ուղղած է ՅՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանին:

«Ապառաժ»- Արցախի Յանրապետութեան այս ծանր օրերուն ՅՅԴ Բիւրոյի անդամ ընկեր Դաւիթ Իշխանեան ընտրուեցաւ ԱՅ ԱԺ նախագահ: Ի՞նչ ընթացք ունեցած է ընկեր Իշխանեանի առաջադրումը այս կարեւորագոյն պաշտօնին՝ ՅՅԴ-ն ի՞նչ հիմունքներով ընդունեց այդ առաջարկը:

Յակոբ Տէր Խաչատուրեան- ՅՅԴ Բիւրոն ստացաւ Արցախի ներկայ ու վերջին երկու նախագահներու համախորհուրդ առաջարկը, որպէսզի Դաշնակցութիւնը իր դերակատարութիւնը բարձրացնէ Արցախի պետական համակարգէն ներս՝ ընդամաքելով ընկեր Դաւիթ Իշխանեանի ԱՅ Ազգային Ժողովի նախագահ առաջադրելու իրենց խնդրանքին, բնական է, որ մենք ամենայն լրջութեամբ վերաբերեցանք այդ առաջարկին, միաժամանակ ունենալով մտահոգութիւններ. քաջ կը գիտակցէինք այն ծանր պատասխանատուութեան բեռին, որուն դէմ յանդիման կը դրուէր մեր աշխարհատարած կազմակերպութիւնը: Գնահատեցինք նաեւ այն իրողութիւնը, որ Արցախի մեր քաղաքական գործընկերները անվերապահօրէն թիկունք կանգնեցան այսպիսի պատասխանատու պաշտօն ստանձնելու առաջարկին:



«Ա.» - Արդե՞ք որեւէ համաձայնութիւն գոյացել է այս ընտրութեան նախօրէին:

Յ. Տ. - Այս առաջարկին կ'ընկերակցէր նաեւ խոստում, որ ԱՅ Ազգային Ժողովի դերն ու պատասխանատուութեան ծիրը պիտի ընդարձակուին եւ խորհրդարանի նախագահը պիտի ունենայ վճռորոշ դերակատարութիւն քաղաքական հիմնական բոլոր գործընթացներուն մէջ, ի մասնաւորի Արցախի կարգավիճակի, անվտանգութեան, բանակցութիւններու եւ առհասարակ:

Շաբ.՝ էջ 3 ➔

Տեղական Լրագրող

Խմբագրական

ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐ ԱՐՑԱԽԱՐԱՅՈՒԹԵԱՆ ՁԱՅՆՆ Է

Արցախահայությունը իր յստակ դիրքորոշումը յայտնած է եւ Ատրպայեյճանի բռնատիրութենէն դուրս գալու իր կամքը ի գործ դրած՝ ինքնորոշման իր իրաւունքը օգտագործելով:

Արցախի Զանրապետութեան Ազգային Ժողովը արցախահայութեան կամքի արտայայտման հիմնական բեմն է: Բեմ, ուրկէ միայն կըրնայ ինչէլ Արցախի ժողովուրդին, քաղաքական ուժերուն որոշումը, ձայնը, որքան ալ փորձ կատարուի մեկուսացնել Արցախը եւ անտեսել անոր իրաւունքը կամ պարտադրել գայն՝ յայտնուելու Ատրպայեյճանի տիրապետութեան տակ:

Ատրպայեյճանի իշխող վերնախաւը կը փորձէ բռնի ուժով պարտադրել արցախահայութեան համարկումը Ատրպայեյճանի մէջ, բոլորովին անտեսելով արցախահայութեան իրաւունքները: Միւս կողմէ Ատրպայեյճանի Նախագահին եւ պետական այլ այրերու ինչեցուցած սպառնալիքները՝ սովահար դարձնելու արցախահայութիւնը, տեղաշարժի իր իրաւունքէն զրկելու, այլ խօսքով՝ բանտարկելու, կամ ի վերջոյ իր պատմական հայրենիքէն գաղթի մղելու, յանցագործութեան մակարդակի հասնող սպառնալիքներ են:

Ատրպայեյճանական պաշտօնական լրատուամիջոցներ սկսած են Զայաստանն անգամ ներկայացնել որպէս Ատրպայեյճան՝ ի յայտ բերելով այդ երկրի իշխող տարրին իսկական նպատակը՝ խաղաղութեան պայմանագիրի անուան տակ պատերազմի Նախապատրաստուելու եւ ոչ միայն Արցախի, այլեւ Զայաստանի տարածքներ բռնագրաւելու:

Ատրպայեյճան փաստօրէն խախտած է միջազգային օրէնքով սահմանուած մարդու բոլոր իրաւունքները՝ արցախահայութեան անհատական իրաւունքները (բաւարար սնունդ եւ կենսամակարդակ ունենալու, տեղաշարժի իրաւունք եւ այլն), խոցելի խումբերու իրաւունքները (մանուկներու, կանանց, տարեցներու, վատառողջ կամ հաշմանդամ անձերու իրաւունք եւ այլն) եւ հաւաքական իրաւունքները (ցեղային խնդրական քաղաքականութենէ զերծ մնալու եւ ինքնորոշման իրաւունքը կիրարկելու իրաւունք եւ այլն): ՄԱԿ-ի եւ տարբեր երկիրներու կողմէ ինչեւ կրչերը Ատրպայեյճանին՝ բանալու Լաչինի միջանցքը, յարգելու մարդու իրաւունքները, յստակ ենթահող կը ստեղծեն Ատրպայեյճանի պատժելիութեան: Աւելին. Ատրպայեյճանի Նախագահի յատուկ յանձնարարութիւններով դեսպան Էլչին Ամիրպետկովի ֆրանսական «Le Monde» թերթին տուած հարցազրոյցին ընթացքին արցախցիներուն ուղղած այն խօսքը թէ. «Երբ անօթի էք, պետք չէ պայմաններ դնէք: Ի՞նչ տարբերութիւն, թէ որ ճամբով պիտի հասնի սննդամթերքը՝ Լաչինէ՞ն, թէ Աղտամէն կամ Ֆիզուլիէն, կարելորդ ապրանք ստանալն է», ուղղակի խոստովանութիւն է, որ շրջափակումը ի գործ դրուած է, արցախահայութիւնը ապրանք չի ստանար, իսկ շրջափակման նպատակը՝ Ատրպայեյճանի տիրապետութիւնը պարտադրելն է:

Արցախի Ազգային Ժողովի հարթակը արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան եւ արցախահայութեան ձայնի բարձրացման գլխաւոր հարթակն է:

7 Օգոստոսին Դաւիթ Իշխանեանի Արցախի Ազգային Ժողովի Նախագահ ընտրուելու յստակ կը դարձնէ Արցախի քաղաքական ուժերու միասնական կեցուածքը քաղաքական եւ մարդկային իրենց իրաւունքներուն համար պայքարելու եւ Ատրպայեյճանի ծուղակին մէջ չիլնալու: Իշխանեան պայքարի երկար ու բարդ ճամբայ կտրած է՝ հաւատարիմ մնալով Արցախի Զանրապետութեան կերտման ազգային սկզբունքներուն:

Կը հաւատանք, որ Դաւիթ Իշխանեանի ընտրութեամբ, Արցախի Ազգային Ժողովի հարթակը արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան եւ Զայաստան-Արցախ-Սփիւռք ներդաշնակ ու նպատակային աշխատանքին նոր թափ կը հաղորդէ:

Արցախահայութիւնը իր պայքարի քաղաքական ուղին յստակօրէն գծած է: Սփիւռքը կոչուած է իր կարելիութիւններն ու լծակները առաւելագոյնս օգտագործելու՝ յանուն Արցախին, յանուն հայրենիքին, յատկապէս նկատի ունենալով Ատրպայեյճանի մարդկային իրաւունքներու բացայայտ խախտումներն ու այդ երկրի քաղաքական գործիչներուն պատժելիութեան ենթահող ստեղծող բազում արտայայտութիւնները:

«Գ.»

-Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ 8 Օգոստոսին ստորագրեց 2023-ի 206 թուակիր հրամանագիրը, որուն համաձայն՝ Սուրիոյ կրթութեան Նախարար նշանակուեցաւ դոկտ. Մուհամետ Ամեր Մարտինի:



-Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ այցելեց Պանիասի ԷլԷկտրաժին նոր կայանը, որ կառուցման վերջին փուլին մէջ է եւ յառաջիկայ շաբաթներուն արտադրութեան պիտի սկսի 24 մէկաուաթ տարողութեամբ, իսկ հետագային՝ 56 մէկաուաթ տարողութեամբ:



Նախագահը այցելեց Նաեւ Լաթաքիոյ մէջ վերջերս արդիական արտադրութեան միջոցներով կառուցուած լուս-ԷլԷկտրական կայանը, ուր խօսք առնելով ըսաւ, որ ԷլԷկտրական արտադրութեան վերաբերող որեւէ զարգացում արդիւնաւետ պիտի ըլլայ թէ կենցաղային պայմաններու բարելաման, թէ տնտեսութեան համար: Նախագահը նոյնպէս կարեւոր համարեց արեւու կենսուժի օգտագործման միջոցներու կիրարկումը:

-Երկուշաբթի, 7 Օգոստոս 2023-ի առաւօտեան ժամը 2:20-ին, Իսրայել օդային յարձակումի ձեռնարկեց բռնագրաւուած Կոլանէն Դամասկոսի շրջակայքը գտնուող կարգ մը զինուորական կեդրոններու վրայ: Յարձակումին հետեւանքով 4 զինուոր Նահատակուեցաւ, 4 ուրիշներ վիրաւորուեցան եւ նիւթական վնասներ արձանագրուեցան: Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դեմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնց մեծամասնութիւնը:



-Սուրիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ սուրիական բանակը Զալէպի հիւսիսային եւ արեւմտեան արուարձաններուն մէջ գտնուող սուրիական բանակի կեդրոններուն դեմ յարձակող զինեալ ահաբեկչական խմբաւորումներու ենթակայ երկու ինքնաթիռ ոչնչացուց եւ այլ երեք ինքնաթիռներ վար առաւ:



Սուրիական բանակը պատասխան հարուածներով ռմբակոծեց կեդրոնները զինեալ ահաբեկչական խմբաւորումներու ղեկավարներուն, որոնց շարքերուն մէջ սպանուածներ եւ վիրաւորներ արձանագրուեցան:

-Սուրիական Երկրաշարժներու Գրանցման Ազգային Կեդրոնը 8 Օգոստոսին յայտարարեց, որ Նախորդ 24 ժամուան ընթացքին երկրաշարժային 5 թեթեւ ցնցումներ արձանագրուած են:

Առաջին ցնցումը տեղի ունեցած է Թուրքիոյ մէջ, 2,9 ռիխթըր ուժգնութեամբ, երկու ցնցում՝ 2,2 ուժգնութեամբ Ադէքնաստրէթի մէջ, իսկ երկու ցնցում՝ 1,9 ուժգնութեամբ Լաթաքիոյ հիւսիսէն 37 ք.մ. հեռավորութեան վրայ եւ Թարթուսի հարաւային շրջանը 25 ք.մ. հեռավորութեան վրայ:



Լուրեր Հայաշխարհին

ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՔ ԼՂ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉԵԱՆԻ ՇԻՐԻՄԻՆ

7 Օգոստոսին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նորընտիր նախագահ Դաւիթ Իշխանեան Ազգային ժողովի նախկին նախագահներ Գեորգի Պետրոսեանի, Աշոտ Ղուլեանի, Արթուր Թովմասեանի եւ խորհրդարանին մէջ ներկայացուած խմբակցութիւններու ղեկավարներուն ուղեկցութեամբ յարգանքի տուրք մատուցած է ԼՂՀ առաջին ժողովին Գերագոյն Խորհուրդի նախագահ Արթուր Մկրտչեանի շիրիմին, ստանալով կուսակցական ընկերոջ օրհնութիւնը:



«Անկախ Արցախի պետականութեան կերտումին առաջին իսկ օրերէն շնորհիւ իմ կուսակցական ընկեր Արթուր Մկրտչեանի հիմք դրուած է բարոյականութեան սկզբունքներուն վրայ հիմնուած քաղաքականութեամբ պետականութիւն կերտելուն: Աճ նախագահին կողմէ Ազգային ժողովի նախագահի պաշտօնը ստանձնելու առաջարկը եւ քաղաքական գործընկերներու յորդորը ստանալէն ետք առաջին հերթին այդ մտատանջութեամբ տառապած եմ՝ արդէս թ պիտի կարենամ պահպանել Արթուր Մկրտչեանին սահմանած բարոյական արժէքներուն նշած ողջը», նոյն օրը գումարուած Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի ելոյթի ընթացքին ըսած է Դաւիթ Իշխանեան:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՋ ՓՈԽՆԱՆԱՐԱՐԸ ԱՆԴՐԱԴԱՐՁԱԾ Է ԱՆԻԵԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ «ԱՆՊԱՏԾԵԼԻՈՒԹԻՒՆ ԿԱՆԱԶ ԼՈՅՍ ԿԸ ՎԱՌԷ ՆՈՐ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ»

«Արմէնփրես».- Հայաստանի արտաքին գործոց փոխնախարար Վահան Կոստանեան արձագանգած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի այն յայտարարութեան, թէ «պատերազմի մէջ յաղթելը իր կեանքի, իր քաղաքական առաքելութիւնն էր»:

«Ատրպէյճանի նախագահի յայտարարութիւնը այն մասին, որ «պատերազմի մէջ յաղթելը իր կեանքի, իր քաղաքական կեանքի առաքելութիւնն էր...», յստա կ օ ղ է ն ց ո յ ց կ ու տ այ, թ է ի ն է պ է ս ան պատ ժ է ի լ ու թ ի լ ու կ ան ա չ լ յ ա կ ը վ ա ռ է ն ո ղ ո ճ ռ ա գ ո ղ ծ ի լ ու ն ն է ռ ու. հ ա մ ա Ր: Մ ի ջ ա գ գ ա յ ի ն հ ա ն ռ ու թ ի լ ու ը պ է տ ը Է ան յ ա պ ա ղ մ ի ջ ջ ը ց ն է ռ ու ձ ե ռ ն ա Ր կ է՝ Լ ե ռ ն ա յ ի ն Ղ ա Ր ա Ր ա ղ ի մ է ջ ց ե ղ ա յ ի ն գ տ ու մ ն է ը ը կ ան խ ե լ ու հ ա մ ա Ր», «Թուիթթըր»-ի իր միջրոպլոկին վրայ գրած է Կոստանեան:



Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ «Իւրոսիւզ»-ին տուած հարցազրոյցին մէջ յայտարարած էր, որ պատերազմի մէջ յաղթելը իր կեանքի, իր քաղաքական առաքելութիւնն էր:

ՂԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ...

Մկրտչ Էջ 1

«Պայքարի ոգին այսօր թելածում է Արցախում: Արցախում բնակուող իւրաքանչիւր անհատ՝ դպրոցական մանուկից մինչեւ գառամեալ ծերունի, դիմադրութիւն ցուցաբերելով թշնամու օրէ օր սաստկացող ճնշումներին, կարողանում է պահպանել իր քոյրերի եւ եղբայրների, հայրերի եւ պապերի կերտած պետութիւնը»,- իր խօսքին մէջ յայտնած է Դաւիթ Իշխանեան՝ աւելցնելով, որ պէտք է հրաշքներու սպասել, քանի որ առանց մեր մասնակցութեան հրաշքներ չեն ըլլար:

Թեկնածութեան առաջադրման մասին մտքեր փոխանակած են ԱՅ ԱԺ բոլոր խմբակցութիւնները: Տեղի ունեցած գաղտնի քուէարկութեան արդիւնքով 22 կողմ, 9 դէմ ձայներու յարաբերակցութեամբ ԱՅ ԱԺ նախագահ ընտրուած է Դաւիթ Իշխանեան:

ՀՅՂ ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ...

Մկրտչ Էջ 1

սարակ արտաքին յարաբերութիւններու ոլորտներուն մէջ: Ազգային ժողովը ԱՅԻ ժողովրդընտիր երկու սիւներէն մէկն է Նախագահական հաստատութեան հետ: Ան լիազօրուած է ներկայացնել ժողովուրդին կամքը եւ խօսիլ անոր անունէն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ ԱԺ-ի նախագահն ունենայ ազդու լիազօրութիւն, գործիքակազմ եւ քաղաքական հնարաւորութիւններ իր գործունեութիւնը արդիւնաւետ կերպով կատարելու համար:

«Ա.»- Այս վճռորոշ օրերին ՀՀ Դաշնակցութեան բաւականին ծանր ու պատասխանատու պաշտօն է վստահուել: Որո՞նք են լինելու ՀՀ-ի հետագայ քայլերը:

Յ. Տ. - Արցախի ժողովուրդի անվտանգութիւնը, բարօրութիւնը եւ զարգացումը բացարձակ առաջնահերթութիւններ են Դաշնակցութեան համար եւ մենք երբեք չենք խուսափած պատասխանատուութեան մեր չափն ու կշիռը բարձրացնելէ ի սպաս Արցախին, մանաւանդ օրհասական պահերուն: Այդ համոզումով ենք գտնուած Արցախեան գոյամարտի ակունքներուն մէջ առաջին օրերէն իսկ՝ պատերազմի դաշտին մէջ, համաշխարհային գօրաշարժ իրագործող հայ դատի բանակով եւ Արցախի զարգացման աշխատանքներու նուիրումով: Որովհետեւ ՀՀ-ի համար Արցախի հիմնահարցի կարգաւորումը ինքնորոշման իրաւունքի հիման վրայ, արցախահայութեան անվտանգութեան ապահովումը եւ ընկերա-տնտեսական ճգնաժամի վերացումը մեր համաշխարհային շարունակական աշխատանքի առանցքը կը կազմէին ցարդ եւ կը կազմեն այսօր:

Համաձայն գտնուելով ընկեր Դաւիթ Իշխանեանի որպէս ԱՅ Ազգային ժողովի նախագահ առաջադրուելու առաջարկին, կ'ակնկալենք որ Արցախի քաղաքական բոլոր ուժերը կը համախմբուին խորհրդարանին շուրջ, լաւագոյնս արտայայտելով իր ճակատագրին տեր արցախահայութեան վրճանակամ կամքը: Միաժամանակ խթան հանդիսանալով մեր աշխարհով մէկ տարուող պայքարին ի դէմ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հայատեաց եւ ցեղասպանական քաղաքականութեան:

Արցախը միևնաջ կ'ի մարտնչի, ան ունի ամբողջ հայութեան նեցուկը: Մենք կը հաւատանք, որ 2020-ի պարտութիւնն ու այսօրուան ճգնաժամը ժամանակաւոր են եւ համազգային ճիգերով յաղթահարելու ենք ներքին թէ արտաքին ամէն խոչընդոտ:

Կը շնորհաւորենք ընկեր Դաւիթ Իշխանեանը իր նոր ու պատասխանատու պաշտօնին ընտրուելուն առիթով եւ կը մաղթենք բեղուն գործունեութիւն եւ լիակատար յաջողութիւն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ Աւետարանական համայնքապատկան նախակրթական եւ երկրորդական վարժարանները 2023-2024 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունին.

- Երկու եւ ւաւելի տարիներու վարչական հմտութիւն ունեցող տնօրէնի եւ տեսուչի,
- Հմուտ եւ համալսարանական վկայագիր ունեցող ուսուցիչներու,
- Տնտես հայրիկի եւ մայրիկի:

Փափաքողները կրնան դիմել Կրթական Խորհուրդի գործավարութեան գրասենեակ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՐԹԱԿԻՆ ՎՐԱՅ ՊԷՏՔ Ե ԿԱՅԱՆԱՅ ՊԵՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԲԻՒՐԵՂԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի (ԱԺ) նորընտիր նախագահ Դավիթ Իշխանյանի ելույթը ԱԺ արտահերթ նստաշրջանին.

Մեծարգոյ պարոն Նախագահ Յարգելի՛ գործընկերներ եւ ներկաներ իրավիճակը եւ պայմանները խիստ արտասովոր են. ընկալելի չի լինի եթե հանդես գամ ծրագրային ելույթով: Ժամանակի թելադրանքը այնպիսին է, որ ամբողջ խնդիրների լուծումը դարձել է հրամայական, սակայն պետք է ի մտի ունենալ՝ վճռորոշը նպատակն է ու տեսլականը:

Նախ եւ անաչ իմ խորին շնորհակալությունն են յայտնում մեր երկրի համար այս ծանր օրերին պատասխանատու նման պաշտօնում իմ թեկնածուները անաչադրելու համար: Բոլորս խորը գիտակցումով ենք գնացել այս քայլին՝ հասկանալով, որ ոչ թե դասական պայմաններում խորհրդարանի ղեկավար կազմ ընտրելու գործընթաց է տեղի ունենում, այլ արտակարգ իրավիճակում է այս որոշումը կայացում:



Նախկինում եւս Արցախի խորհրդարանի ղեկավարը խորհրդարանում ներկայացուած մեծամասնություն կազմող քաղաքական ուժի ներկայացուցիչ չի եղել, այն ժամանակ էլ որոշ հանգամանքներ նման որոշում կայացնելու պատճառ են դարձել: Սակայն համոզուած եմ, որ այս պարագայում, երբ երկրի վիճակն օրհասական է, նման որոշման ընկալումը յանուն միասնության ու որոշումները համախոհությամբ իրականացնելու շատ ավելի ընդունելի կը լինի: Դիւրին չէր նաեւ որոշում կայացնելու գործընթացը:

Պատասխանատու այս պաշտօնը պարտաւորեցնող է, ժամանակն ու կացութիւնը առաւել են:

Ազգային ժողովին ԱԶ Սահմանադրութեամբ տրուած է առաջին հերթին օրէնսդիր գործունեութեամբ զբաղուելու լիազօրութիւն, սակայն միաժամանակ համակարգային առումով Ազգային ժողովը օրէնքով օժտուած այն կարեւորագոյն հարթակն է, որ ժողովրդի կամքն է ներկայացնում եւ որտեղ պետք է տեղի ունենան մտքերի բախումներ՝ տարբեր տեսակետների ազատ արտայայտման վայր հանդիսանալով բոլոր քաղաքական ուժերի եւ խմբաւորումների համար: Այդ առումով, Ազգային ժողովն իր քաղաքական ներկայացուցչական դերը պետք է բարձրացնի: Ազգային ժողովի հարթակում է, որ պետք է ստեղծուի քաղաքական մտքի բախման հնարաւորութիւնը եւ կայանայ պետական-քաղաքական որոշումների քննարկումն ազգային ժողովում: Այս գործընթացի գերծպետք է մասնաւորապէս արտախորհրդարանական քաղաքական ուժերը, որոնք մէջ կան առողջ եւ գիտակից քաղաքական մօտեցումներ ունեցող գործիչներ: Զանի որ պահի թելադրանքն է համախմբել քաղաքական բոլոր առողջ ուժերը՝ բռնուցքուելու համար որպէս իր ճակատագրի տեր վճռական արցախահայրութիւն:

Ազգային ժողովը մեր պետութիւնը ներկայացնող համապետական ընտրութիւնների միջոցով ձեւաւորուող երկու սիւներից մէկն է: Նախագահական ինստիտուտը եւ Ազգային ժողովը այն երկու մարմիններն են, որոնք օրէնքի իրաւունքով լիազօրուած են խօսել ժողովրդի անունից: Չարմատաւոր չեն ներքին եւ արտաքին ուժերի կողմից այն հարուածները, որոնք նպատակը պետական ամենակարեւոր այդ երկու ինստիտուտների քայքայումն է: Դա առաւել նկատելի է դարձել 2020 թուականի 44-օրեայ պատերազմից յետոյ: Դեռ այս դիտանկիւնից պետք է նայել թշնամի պետութեան՝ Ատրոպէյնի նախագահի յորջորջանքը այս երկու պետական հիմնասիւնների կազմաքանդման ուղղութեամբ: Զպետք է անտեսել նաեւ ներքին տարրերի միջոցով Ազգային ժողովի դերի նուազեցմանը ու վարկաբեկմանն ուղղուած քայլերը: Յանուն պետականութեան պահպանման պարտաւոր ենք տեղի չտալ եւ առաւել ամրապնդել սահմանադրական իրաւունքով օժտուած ժողովրդաընտիր այս պետական կառոյցը:

Իւրաքանչիւր պետական կառոյց մեզ համար անվտանգային համակարգի մի բաղադրիչ է: Ազգային ժողովը այդ համակարգի հիմնական յենարաններից մէկն է: Մեր անվտանգային ներկայ համակարգը մեզանից պահանջում է նոր մօտեցումներ ու ռեսուրսներ: ԱԶ եւ նրա ժողովրդի անվտանգային համակարգի հիմնական երաշխիք ՊԲ-ի պահպանումը, զարգացումն ու զօրացումը շատ դեպքերում կախուած է հենց այն օրէնսդրական դաշտից, որին միտուած է մեր գործունեութիւնը: Ազգ-բանակ հայեցակարգի կենտրոնականութիւնը, կամայ թէ ակամայ, պայմանաւորուած է ԱԺ հասարակութիւն կապի եւ դրանից ծնունդ առած օրէնքների ընդունումով:

Խորհրդարանների ընթացիկ պարտականութիւններին զուգահեռ համաշխարհային բեմահարթակում կարեւոր դերակատարութիւն է տրուում խորհրդարանական դիւանագիտութեանը: Պէտք է արձանագրել, որ նախապատերազմեան վերջին տասը տարիներին այդ ուղղութեամբ կատարուել են զգալի աշխատանքներ, ձեւաւորուել են բարեկամական խմբեր, կապեր են հաստատուել տարբեր երկրների պատգամաւորների հետ, Արցախի խորհրդարանի պատգամաւորները բազմաթիւ այցելութիւններ են ունեցել արտասահմանեան երկրներ: Անցած տասնամեակների մեր պատմութեան մէջ կարեւոր երեւոյթ էր 2019 թ. ԱԶ բարձրագոյն իշխանութիւնների, ՀՀԴ Բիւրոյի, աշխարհասփիւռ կառոյցի եւ ՀՀԴ Հայ դատի գրասեն-

եակների ջանքերով Ստեփանակերտում կազմակերպուած Արցախի բարեկամների ֆորում-համաժողովը, որին մաս էին կազմում տարբեր երկրների խորհրդարանականներ եւ քաղաքական գործիչներ: Այդ մասնակիցներից եւ բազմահարիւր այլ բարեկամներով կազմուած ցանցը այժմ եւս առկայ է: Մեր ծանր առօրեան եւ երբեմն նաեւ անճարակութեան զգացումը պատճառ է դարձել, որ յետպատերազմեան շրջանում անտեսուի այդ գիտանցի առկայութիւնը:

Մեր առաջկայ քայլերի մէջ, անշուշտ, կարեւորուելու է այդ ցանցը վերականգնելու եւ նրա հետ աշխոյժ քաղաքական աշխատանքներ տանելու գործընթացը:

Սակայն հարցերի հարցը Արցախ-Հայաստան յարաբերութիւններն են, իսկ մեր պարագայում միջխորհրդարանական համագործակցութեան խընդիրը: Իմ եւ յատկապէս մեր խմբակցութեան անունից բազմիցս հարց է բարձրացուել ՀՀ-ի հետ միջխորհրդարանական յարաբերութիւնների վերականգնման անհրաժեշտութեան մասին: Համոզուած եմ, որ շրջափակման պայմաններում ներկայ տեխնիկական միջոցների առկայութեամբ կարելի է լուծել նաեւ այս հարցը: Ձեր վստահութեան քուէն ստանալով, մենք այդ ուղղութեամբ պարտաւորուած ենք լինելու յստակ քայլեր անել: Մեր քաղաքական կեցուածքը պետք է ուղղուած լինի կամուրջներ կառուցելուն, խուսափելով ապակառուցողական դրսեւորումներից:

Շատերի մօտ ձեւաւորուել է կարծիք, որ ՀՀ-ն իր ձեռքերը լուացել է Արցախից: Իշխող են դառնում այն տեսակետները, թէ մենք պետք է այլ ուղիներ ու գործընկերներ փնտռենք: Ուզում եմ այս պատասխանատու ամպիոնից վերահաստատել եւ վստահեցնել, որ մեր բոլոր ջանքերը ուղղուած են լինելու 1988-ին որդեգրած ազգային ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից ձեւաւորուած կարեւոր ռազմավարական նպատակի իրացմանը: Մնացած բոլոր քայլերն ու ծրագրերը պետք է դիտարկել մարտավարական քայլեր:

Հաւատացեք, քանի դեռ Արցախն ու արցախցին ոչ են ասում բոլոր այն առաջարկներին, որոնք հարուածում են մեր որդեգրած ռազմավարական նպատակին, արձանագրելի է հետեւեալը. ոչինչ չի ւարարուել:

Արցախեան պայքարը 30 տարի շարունակ եղել է այն անաչքը, որի շուրջ համախմբուել են համահայկական բոլոր ուժերը՝ անկախ քաղաքական հայեացքներից եւ անձնական նկատառումներից: Մեր ներագգային համերաշխութիւնը ձեւաւորուել է եռամիասնութեան սկզբունքի հիման վրայ: Տագնապալից այս օրերին անհրաժեշտութիւն է վերականգնել այդ եռամիասնութիւնը: Համոզուած եմ, որ Արցախի Հանրապետության Ազգային ժողովը հնարաւորութիւն եւ ներուժ ունի այդ կարեւոր առաքելութեանը նոր շունչ ու եռանդ հաղորդելու:

Այս կարեւոր, հայրենասնուէր պարտականութեան մէջ մեծ դեր է վերապահուած Հայ առաքելական եկեղեցուն: Եկեղեցին մեր ժողովրդի ճգնաժամային օրերին միշտ կարողացել է ստանձնել ազգապահպան իր առաքելութիւնը: Փոթորկալից օրերին եկեղեցին է եղել այն փրկօղակը, որին կառչելով կարողացել ենք յաղթահարել բազում մարտահրաւերներ: Ես վըստահ եմ, որ ինչպէս եւ անցեալում, այսօրուայ մեր մարտահրաւերների յաղթահարման գործում ու ժողովրդին համախմբելու առաքելութեան մէջ պետութիւն-եկեղեցի համագործակցութիւնը եւ համախորհուրդ քայլերը կարեւորագոյն դեր կ'ունենան հոգեբանական այս իրավիճակից դուրս գալու համար:

Յարգելի՛ գործընկերներ Անկախ Արցախի պետականութեան կերտման առաջին իսկ օրերից, շնորհիւ իմ կուսակցական ընկեր Արթուր Մկրտչեանի, հիմք է դրուել բարոյականութեան սկզբունքների վրայ հիմնուած քաղաքականութեամբ պետականութիւն կերտելուն:

ԱԶ նախագահի կողմից ԱԺ նախագահի պաշտօնը զբաղեցնելու առաջարկը եւ քաղաքական գործընկերների յորդորը ստանալուց յետոյ, առաջին հերթին հենց այդ մտատանջութեամբ եմ տառապել՝ արդե՞օք կը կարողանամ պահպանել Արթուր Մկրտչեանի սահմանած բարոյական արժեքների նշանձողը: Մի բան յստակ է՝ միայնակ դժուար է լինելու, միգուցէ անկարելի, իսկ միասին՝ հնարաւոր:

Արցախի պետութիւնը կերտուել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի արդիւնքում: Այդ ուղղութեամբ վերջին 35 տարիներին մեր ժողովրդի գաւակները չեն ինայել ոչ մի բան: Արիւնով, քրտիկով, բազում գոհաբերութիւնների գնով մեր հաւաքական իրաւունքին տեր կանգնելու կամքը պետք է մնայ անդրդուելի եւ անսկուն: Պայքարի ոգին այսօր թեւածում է Արցախում: Արցախում բնակուող իւրաքանչիւր անհատ՝ դպրոցական մանուկից մինչեւ զառամեալ ծերունի, դիմադրութիւն ցուցաբերելով թշնամու օրեցօր սաստկացող ճնշումներին, կարողանում է պահպանել իր քոյրերի եւ եղբայրների, հայրերի եւ պապերի կերտած պետութիւնը:

Հրաշքների չսպասեք, մեր իրականութիւնը այնպիսին է, որ առանց մեր մասնակցութեան հրաշքներ չեն կարող լինել: Միայն հրաշքներ կատարելու ճգնումը մեզ կարող է դուրս բերել այս իրավիճակից: Ուրեմն հրաշքներ գործելու պատրաստակամութեամբ ու պատասխանատուութեամբ իւրաքանչիւր լծուենք մեր գործին:

Իմ խոնարհումն ու յարգանքը մատուցելով իւրաքանչիւր քաղաքացու՝ այս բարձր ամպիոնից մէկ անգամ եւս ուզում եմ յայտարարել՝ ամէն գնով շարունակելու ենք պայքարը՝ յանուն Արցախի պետականութեան պահպանման ու հզօրացման: Ընտրակալութիւն

ԱՂՏԱՄ-ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՃԱՄԲՈՒՆ ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ԾՈՒՂԱԿԸ

Վերջին քանի մը ամսուան ընթացքին Ատրպեյճանի քաղաքական դեկավարությունը, փորձագիտական շրջանակներն ու լրատուամիջոցները հետևողականորեն կը գարգացնեն դեպի Լեռնային Ղարաբաղ մարդասիրական բեռնափոխադրումները Հայաստանէն Լաչինի միջանցքով իրականացնելու փոխարէն Ատրպեյճանէն Աղտամ-Ստեփանակերտ ճամբայով կազմակերպելու անհրաժեշտութեան իրենց սարքած պատմությունը: Պաքուի կողմէն այդ մէկը աւելի բացայայտօրէն ներկայացուցաւ 15 Յունիսէն ետք, երբ Հայաստանի կառավարչին վրայ Ատրպեյճանի դրօշի տեղադրման անյաջող փորձ կատարելէ ետք, Ատրպեյճան ամբողջովին արգելափակեց դեպի Լեռնային Ղարաբաղ սահմանափակ մարդասիրական բեռնափոխադրումները: Յատկանշական է, որ Աղտամ-Ստեփանակերտ ճամբան նմանատիպ միակ պայմանը չէ: Ատրպեյճանական կողմը կը պահանջէ նաեւ, որ Ստեփանակերտի «Կարմիր հաչ»-ի գրասենեակը փակուի, իսկ Լեռնային Ղարաբաղի մէջ այդ կազմակերպութեան գործունէութիւնը համակարգուի «Կարմիր հաչ»-ի միջազգային կոմիտէի Պաքուի գրասենեակին կողմէն: Բացի այս բոլորէն, Ատրպեյճանէն կը հնչեն նաեւ յայտարարութիւններ, որ Լեռնային Ղարաբաղի մէջ ռուսական խաղաղապահ զօրքի մատակարարումները եւս պետք է իրականացուին ոչ թէ Հայաստանէն, այլ Ատրպեյճանի տարածքէն Դերբենդ-Բարդա-Աղտամ-Իւանեան երթուղիով: Ատրպեյճանի յօրինած այս պատմութիւնները Լեռնային Ղարաբաղի լիարժէք մեկուսացման, անոր շուրջ օղակը սեղմելու քաղաքականութեան մաս կը կազմեն: Ներկայիս Պաքուն առաւելաբար կերտնացած է Աղտամ-Ստեփանակերտ ճանապարհին վրայ: Նոյնիսկ ցուցադրաբար սկսած է անոր վերանորոգութեան աշխատանքները, սակայն վստահաբար կարելի է պնդել որ միւս պատմութիւնները կեանքի կոչելու համար եւս աշխատանքներ կը տարուին:

Անդրադառնանք Աղտամ-Ստեփանակերտ ճամբով բեռնափոխադրումներու կազմակերպման մասին ատրպեյճանական առաջարկին: Հարկ է ընդգծել, որ ատրպեյճանական պաշտօնական շրջանակները Աղտամ-Ստեփանակերտ ճամբան կը ներկայացնեն, որպէս Լաչինի միջանցքին փոխարինող այլընտրանք: Առանց Լաչինի միջանցքի վերաբացման Աղտամ-Ստեփանակերտ ճամբուն շահագործման առաջարկով ատրպեյճանական կողմը կը հետապնդէ քանի մը նպատակ.

Պաքուն նախ եւ առաջ կը ցանկայ միջազգային հանրութեան աչ-

քին իբրեւ թէ կառուցողական երեւիլ, մեղմացնելով Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ խորացող մարդասիրական ճգնաժամի մասին միջազգային ճշումները: Ատրպեյճանը կը փորձէ նաեւ հասնիլ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ ենթակառուցներու, մարդասիրական կապերու ամբող-



ջական խզման՝ մեկուսացնելու Լեռնային Ղարաբաղը եւ իրմէ կախեալ դարձնելու գայն: Ասիկա Պաքուի փաստացի փորձն է շուրջ 8-ամսեայ շրջափակման մէջ գտնուող Լեռնային Ղարաբաղի բնակչութեան պարտադրելու Ատրպեյճանի մէջ համարկուելու օրակարգի ընդունումը: Առանց Լաչինի միջանցքի վերաբացման Աղտամ-Ստեփանակերտ ճամբուն շահագործման հասնիլը Պաքուի կողմէ կ'ընկալուի, որպէս իր յարձակողապաշտ քաղաքականութեան յարթանակը, ինչ որ ճամբայ պիտի բանայ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան վրայ աւելի կոպիտ ճշումներու համար, նոյնիսկ ուժի կիրառումով:

Ատրպեյճանական կողմը Աղտամ-Ստեփանակերտ ճամբուն պատմութիւնը առաջ տանելու հարցին մէջ աշխուժօրէն կ'օգտագործէ իր լրատուական, քարոզչական ողջ գործիքակազմը եւ իր նախածեռնած արշաւին մէջ չի խորշիր նոյնիսկ բարձր մակարդակով ապատեղեկատուութիւն տարածել: Անոր վառ օրինակներն է Ատրպեյճանի նախագահի օգնական Հիքմէթ Հանդիեւի յայտարարութիւնը՝ իբր թէ Աղտամ-Ստեփանակերտ ճամբուն օգտագործման շուրջ Պրիւքսելի մէջ համաձայնութիւն ձեռք բերուած է եւ ճամբան պատրաստ է բազմատեսակ ապրանքներու առաքման համար: Նման համաձայնութեան մասին ատրպեյճանական կողմը հերքեց ինչպէս պաշտօնական Երեւանը, այնպէս ալ՝ Պրիւքսելը:

Երոմփութեան արտաքին յարաբերութիւններու եւ անվտանգութեան հարցերու բարձր ներկայացուցիչ Ժոզէֆ Պորել 28 Յունիսին յայ-

տարարութիւն տարածեց արձանագրելով, որ Եւրամիութիւնը միայն «ի գիտութիւն» ընդունած է Ատրպեյճանի իշխանութիւններու յայտնած պատրաստակամութիւնը՝ ապրանքներ մատակարարել Աղտամ քաղաքէն: Սակայն այդ մէկը պետք չէ դիտարկուի, որպէս Լաչինի միջանցքի վերաբացման այլընտրանք: Աւելի'ն Պորել ընդգծեց որ Լաչինի միջանցքով անվտանգ եւ ազատ տեղաշարժի երաշխաւորումը Ատրպեյճանի իշխանութիւններու պարտականութիւնն է:

Լաչինի միջանցքի անյապաղ ապաշրջափակման մասին յայտա-

գապէս մարդասիրական բեռներու տեղափոխման համար չէ: Ան մարդասիրական միջանցք է, որով Նոյեմբեր 9-ի յայտարարութեան համաձայն պետք է ապահովուի Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ յատուկ կապը, մարդկային շփումները, երթուղիներէն եւ բեռներու ազատ տեղաշարժը երկու ուղղութեամբ: Աղտամ-Ստեփանակերտ կամ այլ ճամբով այդ մէկը կարելի չէ կազմակերպել: Ի տարբերութիւն Լաչինի միջանցքին, Աղտամ-Ստեփանակերտ ճամբուն կիրարկումով Ատրպեյճան լիարժէք վերահսկողութիւն պիտի ունենայ ինչպէս ճամբուն, այնպէս ալ անով իրականացուող բեռնափոխադրումներու գործընթացին վրայ, ինք որոշելով թէ ինչ ապրանքատեսակներ եւ ինչ քանակութեամբ թոյլատրելի է տեղափոխել Լեռնային Ղարաբաղ:

Նման ենթադրութիւններ առնուազն օրինակ են՝ Ատրպեյճանի բարձրագոյն դեկավարութեան յարձակողապաշտ հռետորաբանութեան: 8-ամսեայ շրջափակման իրողութիւնը եւ անգամ կենսական մարդասիրական հարցերուն մէջ Պաքուի ոչ-կառուցողական դիրքաւորումը նոյն օրինակին կը ծառայեն: Նուազ հիմնաւոր են ֆիզիքական անվտանգութեան մտավախութիւնները: Յունիսի վերջաւորութեան Ատրպեյճան Լաչինի միջանցքին վրայ տեղադրուած ապօրինի անցակետէն առեւանգեց «Կարմիր հաչ»-ի Միջազգային Կոմիտէի կողմէն ԼՂ-էն Հայաստան բուժման նպատակով տեղափոխուող 68-ամեայ Վազիֆ Խաչատրեանը: Անոր նկատմամբ Պաքուն արդէն շինծու գործ յարուցած է:

Եթէ ատրպեյճանական կողմը նման ապօրինութիւններ ինքզինք թոյլ կու տայ միջազգային հանրութեան կողմէն ճանչցուած մարդասիրական միջանցքին վրայ՝ «Կարմիր հաչ Միջազգային կազմակերպութեան» պաշտպանութեան տակ գտնուող անձին նկատմամբ, ուրեմն կարելի է պատկերացնել, թէ ինչեր կրնան սպառնալ Լեռնային Ղարաբաղի այն բնակիչներուն, որոնք հարկադրուած պիտի ըլլան օգտուիլ Աղտամ-Ստեփանակերտ ճամբայէն՝ իրենց կենսական կարիքներու ապահովման համար:

Այսպիսով Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող Լաչինի միջանցքը եւ Ատրպեյճանի կողմէն առաջարկուող Աղտամ-Ստեփանակերտ ճամբան որեւէ պարագային չեն կրնար նոյն հարթութեան վրայ դրուիլ: Պաշտօնական Երեւանի դիրքորոշումը յստակ է՝ Լաչինի միջանցքը չի կրնար դառնալ սակարկման առարկայ, առաւել եւս փոխարինուիլ անհասկնալի կարգավիճակով ինչ-որ ճամբայով: Լաչինի մարդասիրական միջանցքի բացումը այլընտրանք չունի: Վերջին մէկ ամսուան ընթացքին աճող միջազգային միահամուր կեցուածքը կը վկայէ այդ մասին:

«Այլ Հայեացք»
Արտագրեց եւ արեւմտահայերէնի վերածեց՝ Վեհան Պարսումեան

ՀԱԼԵՊԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՅԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՕԳՏԱՆԱՑ ԾՐԱԳԻՐԸ ԱՄԱՐՏԻՆ ՀԱՍԱԲ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական Խորհուրդին, 19 Յունիսէն 19 Յունիսի տեւողութեան տեղի ունեցաւ «Ամառնային Դպրոց»-ը Ազգ. Միացեալ վարժարանէն ներս (Կիւլպէնկեան):

Սոյն ծրագիրին պատասխանատուն երտնօրէնութիւնային Քեօշկերեան-Բանոյեան, գործակցաբար Ուսումնական Խորհուրդին եւ տասնվեց ուսուցիչ-ուսուցչուհի-

հարուստ Հայոց պատմութեան, պատրաստեցին ձեռնայինը յատկապէս հայրերու տօնին առիթով, նկատի ունենալով, որ հայրը հայ ընտանիքին ու ազգին յատկութեան լուսաւոր պսակն է եւ անմեղունակ արտայայտութիւններով իրենց երախտագիտութիւնը յայտնեցին հայրերուն, ինչպէս նաեւ գծեցին, ներկեցին, խմորներով կերպարներ շինեցին, հայրենասիրական երգեր սորվեցան, պարեցին, ու-



ներու: Ծրագիրին հետեւեցան հարիւր աշակերտ-աշակերտուհիներ՝ մասկապարտեզէն եւ նախակրթարանէն:

«Ամառնային Դպրոց»-ին նպատակն էր համախմբել աշակերտները, զարգացնել անոնց մտաւոր կարողութիւնները եւ հեռու պահել զանոնք այլասերիչ ու օտար միջավայրերու ազդեցութիւններէն:

Հինգ շաբթուան ընթացքին, շաբթական հինգ օրուան դրութեամբ՝ Երկուշաբթիէն Ուրբաթ առաւօտեան ժամը 9:00-էն 12:15 աշակերտներն ու աշակերտուհիները վայելեցին ուրախ, խանդավառ եւ հաճելի մթնոլորտ մը:

Ծրագիրը կ'ընդգրկէր աշակերտներուն լեզուական եւ մտային հմտութիւնները զարգացնող ժամանակակից սիւթեր, արտադպրոցական գործունէութիւն, հաճելի պտոյտներ եւ այցելութիւններ:

Ծրագիրի իրագործման ընթացքին մասնագետ ուսուցիչ-ուսուցչուհիներու կողմէ աշակերտներուն հրամցուեցան օգտաշատ գանձեր գիտելիքներ: Անոնք սորվեցան հայրենի քերականական օրէնքներ, բարելաւեցին իրենց անգլերէն եւ ֆրանսերէն մտերմ, ինչպէս նաեւ մտային հաշիւի կարողութիւնները, սորվեցան աղօթքներ ու սաղմոսներ, ծանօթացան եկեղեցւոյ ներքնամասին, սպասներուն եւ եկեղեցական զգեստներուն, այցելեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի եւ մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան արարողութիւններուն ու շարականներու երգեցողութեան, նաեւ ծանօթացան Միւռնոսաբան օրհնուած շուրի բուժարար յատկութիւններուն: Աշակերտները ունեցան նաեւ համակարգչային գիտութեան պահեր՝ իւրացնելու այս մարզին առընդունող ծով գիտելիքներէն մաս մը, ծանօթացան մեր ոսկեղնիկին եւ

նեցան մարզանքի պահեր ունենալու՝ առողջ միտք, առողջ մարմնի մէջ:

Դասի, գեղարուեստի եւ մարզանքի մթնոլորտէն դուրս, իւրաքանչիւր շաբթուան Ուրբաթ օրերը տրամադրուեցան արտադասարանային գանձեր պատոյտներու, ինչպէս՝ Տէր Սանթ, Cheeky Monkeys Kids Club, Kids House Club: Իսկ ՀՄԸՄ պարտեզէն ներս «Salt» հաստատութենէն անդամներ ներկայացան եւ 5-րդ եւ 6-րդ կարգերու աշակերտներուն հետաքրքրական գիտելիքներ փոխանցեցին դաստիարակչական եւ հոգեբանական նիւթերու շուրջ, ապա բոլոր աշակերտները շրառատ փունջներով ու դոյլերով վայելեցին Վարդավառի անուանական տօնին բերկրանքը:

Աւարտին բոլորին աշխատանքային թղթածրարները յանձնուեցան եւ «Ամառնային Դպրոց»-ը փակեց իր դռները:

Ուրբաթ, 21 Յունիս 2023-ի առաւօտեան, Ուսումնական Խորհուրդին հրաւերով եւ անդամներուն ու տնօրէնուհիին ներկայութեամբ, «Ամառնային Դպրոց»-ի ծրագիրին բոլոր մասնակիցները համախմբբուեցան «Գ. Եսայեան» սրահի լոպիս, ուր Ուսումնական Խորհուրդի ատենապետուհի Անի Գալտնեան բարձր գնահատեց բոլորին տարած աշխատանքը, մաղթելով՝ ուժ, կորով եւ ապահով օրեր: Ան յորդորեց զարկ տալ նմանօրինակ ձեռնարկներու՝ հարըստացնելու աշակերտներուն արծակուրդի օրերը: Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Կը մաղթեցք, որ յառաջիկայ տարին կրկին վայելենք մեր աշակերտներուն ուրախ ներկայութիւնը:

Բարի արձակուրդ բոլորին:

Ուսուցչուհիներ՝
Սեան Տէյիմենեան
Ալին Գազանճեան-Տէյիմենեան

Թուրքիոյ նուրբ

ԹԱՆԵՐ ԱԶՅԱՄ. «ԱՏՐՊԵՅՃԱՆ ԿԸ ԶԳՏԻ ՎՏԱՐԵԼ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՅԵՐԸ»

Թուրք պատմաբան, ցեղասպանագետ, ԱՄՆ-ի Քլարք համալսարանի փրոֆ. Թաներ Ազյամը «օրբեւի» վերլուծական կեդրոնի հարցումին պատասխանելով գնահատած է Արցախի շուրջ ստեղծուած իրավիճակը: Ան «դասական ցեղային գտման» քաղաքականութիւնը որակած է Ատրպէյճանի գործողութիւնները Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին նկատմամբ:

«Երմենիկապէր»-ը կը ներկայացնէ Թաներ Ազյամի՝ «օրբեւի վերլուծական կեդրոնին տրուած մեկնաբանութիւնը ամբողջութեամբ»:

«Այն դէպքերը, որոնք Ղարաբաղի մէջ մեր աչքին առջեւ կը կատարուին, բացայայտ մարդկային ողբերգութիւն են եւ թէ՛ երկկողմ, թէ՛ միջազգային պայմանագրերու բացայայտ խախտում: Իրավիճակը կարելի է գնահատել որպէս «դասական ցեղային զըտման» քաղաքականութիւն:

Ատրպէյճանի Թուրքիայէն իսկ ստացած աջակցութեամբ կը ձգտի վտարել Ղարաբաղի շրջանի բոլոր հայերը եւ վերջ տալ հայերու գոյութեան անոնց պատմական հողերուն վրայ:

Բաւական մեծ է հաւանականութիւնը, որ առայժմ միայն տնտեսական եւ փոխադրական շրջափակումով սկսած նախաձեռնութիւնը կը վատթարանայ եւ կը ներառէ բռնութիւն:

Յաւային այն է, որ միջազգային հանրութիւնը՝ Ռուսիոյ գլխավորութեամբ, կը լռէ այս զարգացումներուն ի տես եւ կը բաւարարուի միայն դիտելով: Իմ ողջ յոյսը այն է, որ միջազգային հանրութիւնը դուրս գայ խորքունէն եւ, Ատրպէյճանի վրայ ճշում բանեցնելով, միջնորդ ըլլայ տագնապի լուծման համար, որ կ'երաշխաւորէ Ղարաբաղի հայերուն հիմնարար մարդու իրաւունքները:

Մարդու իրաւունքները պաշտպանելը եւ անիրաւութիւնները կանխելը ամէն ինչ աւարտելէ ետք բացուող հովանոց չէ: Յեղային գտումները եւ/կամ ցեղասպանութիւնները կանխելը կոկորդիլոսի արցունքներ թափել չէ այն բանէն ետք, երբ տեղի կ'ունենան սարսափելի բաներ: Եթէ ցանկութիւն կայ մեծ ողբերգութիւններ կանխելու, աւելի աշխույժ միջամտութիւն հարկ է ի գործ դնել:

Իմ ամենամեծ յոյսը այն է, որ անհրաժեշտ միջազգային ճշումով եւ երկկողմ հանդիպումներով առկայ իրավիճակը հանգուցալուծուի: Մեր սիրտը, մեր հոգին Ղարաբաղի ժողովուրդին հետ է, որ դէմ առ դէմ յայտնուած է լուրջ սպառնալիքներու»:

Եագուպիէ...

Սկիզբ՝ էջ 8

ոմանք կը շարունակէին դէպի Պէրոլթ, մինչեւ իսկ Հայէպ... քառասուն-յիսուն վայրկեանի ընթացքին Էթիոպիայէն անցած էր Քեսապի գրեթէ ամբողջ բնակչութիւնը՝ շուրջ 4000 հոգի ու հոնկէ՛ դէպի Լաթաք-իա» (2):

Եագուպիէի լատիները կամ կաթողիկէները, որոնք Եագուպիէի ստուար մէկ բաղադրիչն են, հայերու արիւնակիցներ են, ընդհանրապէս կը կրեն հայերու նոյնանման մականուններ (Քասախ, ճըղ, Մըսթրիի, Տէր Գարգուր, Քըմայա, Խլլօ, Հատուատ, Պիթար, Խէջօ, Սըման եւ այլն), ընտանեկան եւ ազգականական կապեր ունին հայերու հետ, անոնց դաւանափոխութեան մասին անդրադարձը կարելի է հետագային ներկայացնել:

Չինեալ ծայրայեղականները եւ մանաւանդ այդտեղ ժամանած իսլամական գանազան իմբաւորումներէն՝ ճապիաթ ալ-Նուսրայի զինեալները, երբ գիւղ խուժեցին, լատիներու հոգեւորականները եկեղեցւոյ եւ յարակից շէքերուն բանալիները յանձնեցին իսլամականներուն, որպէսզի փրկուին: Ստորակայութեան հասնող այս զիջումն անզամ օգտաբեր չեղաւ. անոնց

եկեղեցիէն վար անուեցան խաչերը, լռեցին եկեղեցւոյ գանազերը, անոնք ենթարկուեցան ընկերային սահմանափակումներու, կիններուն պարտադրուեցաւ գլխածածկ դուրս գալը եւ այլն:

Նոյնն էր նաեւ այդ շրջանին բոլոր քրիստոնէայ գիւղերուն մէջ մնացող քիչ թիւով քրիստոնէայ իրաւատերերուն պարագան: Ի վերջոյ ձեւով մը պետք է տիրէր իսլամական խալիֆայութեան մը կառոյցի հիմնական բաղադրիչներ բաղկացած համակարգ մը՝ կրօնական դատարան, բանտ եւ չարչարանքներու կեդրոններ, զինամթերքի շտեմարաններ եւ մանաւանդ կանանց եւ տղամարդկանց աղօթարաններ. այդ բոլորը տեղի ունեցած են օգտագործելով զիւրէն հեռացող Եագուպիէցիներու բնակարանները, շահագործելով նաեւ անոնց առանձնատները եւ կայուածները:

Սուրիոյ տագնապի շրջանին՝ 2012-էն ետք, դառնութիւններով լեցուն փորձութիւն մը՝ խալիֆայութեան մը շեմին հասնող իրավիճակ մը հաստատուեցաւ Եագուպիէի մէջ:

(Շար. 1)

1-«Գանձասար» շաբաթաթերթ Օգոստոս Գ (2022), էջ 8. <http://www.kantsasar.com/news/37625-2/>
2-Յակոբ Զոլաթեան, «Քեսապի երեք օրերը» (Երեւան, 2014) էջ 20 եւ 23

Պրիմալեա

ՆԵՐՍԻ ՇՈՒԿԱՆ



Մարուշ Երամեան

Արեւելքի գրեթէ բոլոր հին քաղաքները այս շուկաներն ունին, Համիտի՝ Դամասկոսի մէջ, Իսան Խալիլ՝ Գահիրէի մէջ, իսկ Հալէպի մէջ՝ Ներսի շուկայ, Բերդին անմիջական հարեւանութեամբ:

Ներսի շուկայ, մութ շուկայ, գոց շուկայ ... Պաշտօնական անունը սակայն՝ Քաղաքի շուկայ (սու՝ ըլ մըտինէ), հին քաղաքի շուկան: Ինծի համար՝ միշտ Ներսի շուկայ:

Բազմաթիւ մուտքերէն ինծի ծանօթ են կիներու շուկային մուտքը, համեմատելով շուկային մուտքը, քաղցրեղէնի շուկային մուտքը եւ բուրդի շուկային մուտքը, որ Բերդին դիմացէն է: Մնացեալ մուտքերը դէպի Բերդ գացող ճամբուն վրայ են:

Առիթ չէի փախցնել որովհետեւ բաղնիք երթալու նման, Ներսի շուկայ երթալն ալ քեզ կը հանէ առօրեայիդ հոգերէն եւ պահ մը քեզի կը պարզէ: Եւ քաղաքիդ մէջ գրօսաշրջիկ ըլլալու պերճանքը, բազում անգամ տեսածներդ նոր նայուածքով դիտելու ուրախութիւնը, մանաւանդ՝ նորութիւններ տեսնելու երջանկութիւնը, որովհետեւ որքան ալ տեսած ըլլաս դարպասներուն նախշերը կամ պատի մը վրայի արձանագրութիւնը, միշտ ալ նոր մանրամասնութիւն մը կրնաս գտնել հոն:



Թաքսիով կը հասնիմ Եօթ ծովակներու հրապարակը (Սապաա Պահրաթ) եւ հոն ալ կ'իջնեմ: Շուկան հոնկէ հեռու չէ՝ կէս քիլոմէթր եւ քիչ մը ակելի, բայց կը նախընտրեմ քալել, որովհետեւ ճամբուն վրայ ինչե՛ր կան:

Նախ այդ ճամբուն ճիշդ դէմը Ումայյատ մզկիթն է, որուն միւսարեւ քառակուսի է, հակառակ իսլամական ընդունուած սովորութեան:

Կ'ըսուի թէ շատ հին՝ հելլենիստական շրջանին այստեղ գտնուել է ակօրան՝ քաղաքին գլխաւոր հրապարակը, ապա, հռոմեական շրջանին այստեղ եղած են Սուրբ Հեղինէ եկեղեցւոյ պարտեզն ու գերեզմանատունը:

Ուրեմն քառակուսի միւսարեւ փաստօրէն Սուրբ Հեղինէ եկեղեցւոյ գանգակատունը եղեր է:

Կ'ըսուի նաեւ, որ այս մզկիթին մէջ կը պահուին Յովհաննէս Մկրտիչի հօր՝ Չաքարիայի աճիւնները, որոնց համար մզկիթը նաեւ ուխտատեղի կը համարուի:

Կը դիտեմ նուրբ գարդանախշերը, յետոյ կը դիտեմ վերջերը մշակուած գեղեցիկ պարտեզները, գոյն-գոյն ծաղիկներով: Անմիջապէս քովը Ներսի շուկային կիներու մուտքն է, բայց դեռ չեմ մտնել: Կը շարունակեմ ճամբաս, անգամ մը եւս վայելելու համար Պիստակի մզկիթը (Ճամբ՝ ըլ Ֆըստո)՝ իր շատ գեղեցիկ մեղրախորիսի կամարով (մոքարնասաթ) եւ կողքին՝ Իսան ալ-Ուազիրի շքեղ մուտքը:

Աջին Պարսկական խոհանոցն է (Ալ մաթպախա ալ-Աճամի), Այյուպիներու մէկ պալատը, կառուցուած Աճամի ընտանիքին կողմէ, 13-րդ դարուն:

Կը դիտեմ հաճոյքով եւ կ'որոշեմ օր մը ժամանակ տրամադրել եւ այս երկու կառոյցները այցելել: յետոյ կը յիշեմ, որ տակաւին բաց չեն այցելուներու համար, նորոգութիւնները աւարտած չըլլալուն:

Արդէն շատ մօտ եմ Բերդին. յստակօրէն կ'երեւին անոր կողերուն անձրեւաչորի խորունկ հետքերը, կարծես հաստատելով իր մեծ տարիքը, դարերու ընթացքին տեսած ծանր դէպքերն ու կրած յուզումները: Տակաւին չէի գիտեր, թէ ի՛նչ տեսնելիքներ ունեին ինքն ու քաղաքը ...

Իսան Ուազիրի մուտքէն կը մտնեմ եւ անմիջապէս այց կը դառնամ, առանց մոռնալու կրկին հիանալ Օճամի Իսանին (Իսան Սապուն) նախշագարդ եւ շատ նուրբ դարպասով, - հասնելու համար համեմունքներու շուկան եւ Ապու Սթեֆին, որմէ ծաղկեթուրմ գնելու եկեր եմ:

Այս անգամ սակայն ուրիշ «հետախուզութիւն» մըն ալ պետք է ընեմ՝ Եսայի Թուման, Հալէպի վերջին տարիներու արուեստագետ-լուսանկարիչն ու լուսանկարչական տարեկան ցուցահանդէսներուն հիմնադիրը, այս անգամ Մատրասաթ էլ Շիպանիի մէջ ըրած է ցուցահանդէսը, համոզելով պատ-

կան մարմինները, որ նորոգեն այդ լքուած կառոյցը եւ օգտագործեն:

Ճամբան չէի գիտեր, ըսուած էր, որ պետք է Ներսի շուկային մէջէն անցնիլ հոն հասնելու համար (յետոյ այլ մուտք մը գտանք, որ բերդին դիմացէն ուղղակի Մատրասաթ էլ Շիպանի կը տաներ):

Գնումս ընելէ ետք, Ապու Սթեֆեն ուղղութիւն հարցուցի եւ ըստ իր բացատրութեան, սկսայ երթալ:

Ճամբուն վրայ նախ դէմս ելաւ դափնիի՝ դար, օճամի գործարան մը. -Կրնա՞մ մտնել դիտել:

Ինչպէս միշտ, այս անգամ եւս, դրան վրայ կեցողը, որ պահակէ մը ակելի բարձր պաշտօն ունէր կարծես, սիրով ընդունեց գիս եւ հեռուէ հեռու սկսաւ հետեւիլ, թէեւ այնքան ալ մեծ չէր այդ գործարան ըսուածը, որ խորքին մէջ արաբական հին տուն մըն էր, մէկ սենեակին մէջ օճամի հեղուկին աւազանը, իսկ բակին մէկ կողմը գետինը փռուած էր օճամը, որ կտրտուելու կը սպասէր, միւս կողմը՝ արդէն կտրտուած եւ իրար վրայ շարուած օճամները, որոնք պետք է չորնան:

Մէկ անգամ ալ խորունկ շնչելէ ետք դար օճամին սքանչելի հոտը, շնորհակալութիւն կը յայտնեմ եւ դուրս կ'ելլեմ:

Քիչ մըն ալ կը քալեմ դարձողարձիկ նեղ թաղերէն, որոնք լափիւրիսթու մը կը կազմեն, եւ ի՞նչ տեսնեմ՝ փոքրիկ դարպաս մը, կամարին վրայ՝ Պիմարստան գրուած:

Լսել էի այդ բառը, որ յիմարանց կը նշանակէ եւ ուր, շատ հին ժամանակներուն, հիւանդները ջուրին խոխոջով եւ երաժշտութեամբ կը դարմանէն եղեր:

Գեղեցիկ, գողտրիկ արաբական տուն մը, լիվանով եւ մէջտեղը աւազանով, այն տարբերութեամբ, որ աւազ անէն փոքր առուններով ջուրը կը հոսի, բակին շրջանը կ'ընէ եւ յետոյ կ'երթայ դէպի Ներս, հաւանաբար բաղնիքները:

Հանդարտութիւնը կը ծփայ աւազանին վրայ, ուր ջուր չկայ, բայց վանդակապատ պատուհանները տխուր պատկերներ կը հիւսեն աչքերուս առջեւ, կարծես կը լսէի ձայները հոն բանտարկուած խեղճերուն, որոնք ո՛վ գիտէ ինչ պայմաններու տակ կորսնցուցեր են իրենց հոգիին խաղաղութիւնը ...

Դուրս կ'ելլեմ տխրութեամբ եւ շարունակեմ ուղիս մինչեւ Շիպանի, փորձելով մտապահել ճամբան:

-Բայց ինչո՞ւ նոյն ճամբէն վերադառնաս, - կ'ըսէ արկածախնդիր եսս, - շարունակե՛, թերեւս ուրիշ հետաքրքրական տեղեր ալ գտնես ..., - ըսաւ եւ համոզեց:

Շարունակեցի. բայց քանի կը խորանայի, թաղերը ակելի կը նեղնային, լռութիւնը ակելի կը շեշտուէր, եւ այն քանի մը անցողիկները, որոնք պատին տակ քաշուելով ճամբայ կու տային, կասկածով կը դիտէին գիս:

Վախցայ: Երեւակայութիւնս թափ առաւ՝ եթէ դուռ մը կամացուց կը բացուէր, գիս հանդարտօրէն ներս քաշեր ու փակուէր վրաս, ո՛վ պիտի իմանար ... Ըստ հաշիւներուս, ուղղութիւնս դէպի մեծ պողոտայ պետք էր տաներ գիս, բայց պողոտային նշույն իսկ չկար, աղմուկը եւ ինքնաշարժներու շնչակներուն ձայնն իսկ չկային:

Վերջ ի վերջոյ տարեց մարդ մը մօտեցաւ.

-Ո՞ր կ'երթաս, քոյրս, - հարցուց:

-Կ'ուզեմ պողոտայ ելլել եւ թաքսի մը առնել, - ըսի:

-Գիտեմ որ այս կողմերէն չես, բայց նաեւ գրօսաշրջիկ չես ..., - մարդը գլուխը շարժեց, ճամբան ցոյց տուաւ եւ սպասեց մինչեւ թաղին անկիւնը հասայ:

Այդքան վախցած չէի շա՛տ վաղուց, անկողինին տակի հրէշները նուաճելու ի վեր:

Յետոյ յաճախ գացիք Շիպանի դպրոցը, ուր տեղի ունեցաւ նաեւ Հալէպի առաջին ճագ *Ֆէյթիվալը*, շատ մեծ ոգեւորութիւն ստեղծելով:

Ներսի շուկան, արեւելեան բաղնիքներն ու մանաւանդ Բերդին շուրջ բուսած նորօրեայ սրճարանները քաղաքին այլ եռանդ տուէր էին, գրօսաշրջիկներուն թիւը շատ արագ մեծ աճ արձանագրեր էր եւ Հալէպը դարձեր էր թերեւս այն միակ քաղաքը, որ իր հնութիւններուն հետ կը պահէր եւ կը ցուցադրէր նաեւ մարդկային արդէն մոռցուած յատկանիշեր՝ բարութիւն եւ ազնուութիւն, իրարօգնութիւն, օտարին հանդէպ յարգանք եւ գուրգուրանք, որոնք գրօսաշրջիկներուն կողմէ կը գնահատուէին ճիշդ այնքան, որքան հնագիտական վայրերը:

Այսօր ... Որքան կ'իմանամ եւ կը տեսնեմ համացանցէն, արդէն նորոգուէր են շուկաները. բայց կը կարծեմ թէ ինծի պէս մարդոց համար, որոնք տարօրէն կապուած էին քաղաքին հին շրջանին, միշտ ալ նորին տակ պիտի տեսնենք հինը, վաւերականը, որ կը շարունակէ ապրիլ մեր սրտերուն մէջ:

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

Եագուպիէ. Ապրուած Օրերու Յուշեր - 2- Խալիֆայութեան մը շեմին



Փրոֆ. Արամ Սայեղ

15 Մարտ 2011-ին Սուրիոյ հարաւային շրջաններէն՝ Տարաայի նահանգէն լարուածութիւնը ծայր առաւ եւ աննախատեսելի քաղաքացիական ներքին տագնապի վերածուելով տարածուեցաւ երկրի ամբողջ տարածքին (1): Իտլիպի նահանգը ընդհանրապէս եւ ճրտըր Շղուրէն դէպի հիւսիս մինչեւ Եագուպիէ 15 քիլոմէթր տարածքները, եւ անկէ անդին մինչեւ թրքական սահման մօտաւորապէս 5 քիլոմէթր հեռավորութեամբ, մեծամասնութեամբ սիննի արաբ գիւղերով շրջապատուած տարածաշրջանին մէջ, կը գտնուէին իրար շատ մօտիկ երեք քրիստոնէայ գիւղեր՝ Եագուպիէն հայ առաքելականներէ եւ լատինադաւաններէ բաղկացած, Զընայէն՝ մեծամասնութեամբ լատինադաւան եւ Ճտէյտէն՝ յոյն ուղղափառ համայնքով: Այդ երեք գիւղերու Թուրքիոյ հետ սահմանային ամենէն մօտիկ սահմանակէտը՝ արաբական Զասսանիէ (Hassaniyeh) եւ կամ թրքական Զաթիա (Hatya) կը կոչուի: Այդ կէտէն դէպի հիւսիս եւ դէպի արեւմուտք կը գտնուի Զաթայ (Hatay) կղզուած մարզը:



1939-ին, Ֆրանսայի հետ կնքուած համաձայնագիրով արաբական ուժերու կողմէ ազատագրուած Աղեքսանտրիթը կցուեցաւ Թուրքիոյ, որ գայն փութաց Զաթայ կղզի՝ թրքացման իր քաղաքականութեան ծիրին մէջ, այսինքն՝ նախկին Աղեքսանտրիթը կամ արաբերէնով Իսկանտարուկը:

Սահմանամերձ Զաթայէն Թուրքիոյ քանդակ դերը բացայայտ էր Սուրիոյ տագնապի ընթացքին: Սուրիոյ Իսկանտարուկի կցումէն ետք, Թուրքիոյ հողային նկրտումները, հողային նուաճումներու արտօրակը տակաւին կը շարունակուին: Թուրքիան, զանազան ապահովական պատճառաբանութիւններով, հետամուտ է Սուրիոյ հիւսիսէն նոր տարածքներու տիրաւայութիւնը:

Ըստ Թուրքիոյ դաշնակից երկիրներու յայտարարութեանց, Սուրիոյ տագնապի ժամանակաշրջանին զինեալ իսլամ ծայրայեղականներուն մեծաթիւ ներկայութիւնը եղած է Զաթայի մարզին մէջ, վաթսուն հազարէն ավելի հաշուող զինեալներու խմբաւորումներով: Չինեալներու ներկայութիւնը կեդրոնացած էր ընդդիմադիր Սուրիական Ազատ Բանակի եւ հետագային կազմաւորուած ու այդտեղ տեղադրուած ուրիշ իսլամական՝ սալաֆի, ահաբեկչական ճիհաստիյթ ըմբոստներու, ծայրայեղական խմբաւորումներու հետ, ինչպէս՝ ալ-Բախտան, Ճապիթա ալ-Նուսրան, Զայաթ Թահիր ալ-Շամ, Շամ ալ-Իսլամ, Անսար ալ-Շամ եւ այլն:

Թրքական յիշեալ տարածքներէն դէպի Իտլիպ նահանգի ամբողջ տարածքը դարձած էր իրենց համար ապահով գիւնակայան մը, ահաբեկչական կեդրոնական հաւաքավայր մը, արաբ եւ զանազան ազգութիւններէ մոլեռանդ վարձկան ահաբեկիչներ, կրօնամոլ իսլամականներ կազմուած խմբաւորումներուն համար:

Ահաբեկչական պատրաստութեամբ այսքան հսկայ թիւով մարդուած գիւնեալներ եւ գրոհայիններ կրնային մարախի նման Սուրիոյ հիւսիսային թուրք-սուրիական սահմանակէտերէն՝ Իտլիպի նահանգի զանազան շրջաններու մէջ արագ թափով տարածուիլ, գրոհային հարուածներ հասցնել: Մանաւանդ, որ թուրք-սուրիական սահմանակէտերէն մէկը միւսին ետեւէն անցան ընդդիմադիրներու, ըմբոստներու հակակշռին տակ: Թրքական այդ տարածքներուն մէջ կը գտնուէին անոնց պատկանող հիւանդանոցները, զօրանոցները, զինապահեստները: Բնական է, որ այդ գիւնեալներու բոլոր շարժումները, ահաբեկչական գործողութիւնները կը կատարուէին միայն թրքական բանակի հովանաւորութեամբ՝ հրամանով եւ ցուցմունքներով, արտօնութեամբ, հսկողութեամբ ու առաջնորդութեամբ, որոնք ուղղուած էին դրացի ինքնիշխան պետութեան մը խաղաղ քաղաքացիներուն եւ կառոյցներուն դէմ: Ահաբեկիչ ծայրայեղականներու գիւնողն ու հովանաւորողը նոյնիսկն է, իր ծրագիրներուն համար զանոնք շահագործողը:

Սուրիոյ տագնապի հանդէպ Թուրքիոյ բացասական բեմագրութեամբ ծրագրուած դերը, անոր զինեալ հանգամանքներով մասնակցութիւնը՝ իր հողային տարածքներէն ապօրինի գիւնուած խմբաւորումներու նազամամթերքի տեղափոխութեան արտօնութիւնը եւ անոնց ահաբեկչական բնութիւնով դիմադրութեան հովանաւորումը, արդէն փաստացի օրինագրականութիւն մըն է: Ահաբեկչական խմբաւորումներուն հետ համագործակցելու եւ օժանդակելու վկայութիւն է, որ ինքնին յանցագործութեան արարք ու արտօնագիր է անոնց ավելի ազատ ու ինքնավստահ ահաբեկչական ծրագիրներ իրագործելու առումով: Բացայայտ իրականութիւն է այդ տարածաշրջանի

մէջ Թուրքիոյ ոճրամիտ քաղաքականութիւնը: Սուրիական տագնապէն առաջ Իտլիպ նահանգի բոլոր շրջանները ամբողջութեամբ ենթակայ էին սուրիական պետական անկախ գերիշխանութեան, որ պահպանուած էր սուրիական ինքնիշխանութեամբ, պետական զօրքերու տիրապետութեամբ: Սակայն այդ տիրապետութիւնը շրջուեցաւ 2011-ի վերջաւորութեամբ:

Անցնող տասներկու տարիներէն ետք, այդ շրջաններուն մէջ տակաւին բացակայ է սուրիական պետական իսամատարութիւնը, իշխանութիւնը, անհեռանկար է սուրիական անկախ գերատեսչութիւնը: Կարծես այդ շրջանները դրացի պետութեան՝ Թուրքիոյ հովանաւորութիւնը վայելող տարածքները ըլլային, Թուրքիոյ տնտեսական իսամատարութեամբ եւ կենցաղային հոգածութեամբ, որ երբեմն ծրագրուած էր աշխարհութիւն մը կը յուշէ: Միջազգայնօրէն այսօր անխախտ իրականութիւն է Թուրքիոյ ունեցած թշնամական, անսպարկէտ դերակատարութիւնը, տուեալ տարածաշրջաններու եւ ընդհանրապէս Սուրիոյ եւ Իտլիպ նահանգին եւ անոր պատկանող Եագուպիէի շրջանին մէջ: Ակնյայտ է հոն իշխող ծայրայեղ իսլամականներու համակրանքը Թուրքիոյ հանդէպ, ուր անոնք այդ պետութեան ամփջական եւ ամբողջական ենթակայութիւնը կը վայելեն: Կարելի է յիշել, որ Սուրիոյ տագնապի ընթացքին Իտլիպի արաբները հակապետական պահուածքով մը եղած են ընդդիմադիր խմբաւորումներու կողմնակիցներ, որուն հետեւանքով ալ Իտլիպ նահանգը անոնց առանցքային յեռակէտը դարձած էր:

Ճշմարտութիւն է, որ Եագուպիէն չէ ազատագրուած՝ տեղահանուած ուխտապահ Եագուպիէցիները տուն ու գիւղ չեն վերադարձած. այնքան ատեն որ Թուրքիոյ թշնամական հովանիին տակ գործող ծայրայեղական իսլամականները եւ անոնց համակիրները գերակայութիւն են՝ գերիշխող բռնատիրական ներկայութիւն են այդ տարածքներուն վրայ, այս իրավիճակը ավելի խորացած է մարդասիրական ճգնաժամը:

Սուրիոյ հայ համայնքի վերջին կէտ դարու պատմական ժամանակաշրջանին մէջ, հայութիւնը ընդհանրապէս հակամետ էր Զայր՝ Զաֆէզ Ասատի եւ ներկայիս ալ հակամետ կը մնայ որդի՝ Պաշար Ասատի իշխանութեանց վարչակարգին: Սուրիահայութիւնը իր յօժարութիւնը հիմնաւորած էր իշխող վարչակարգի հանդէպ վստահելի հաւատարմութեամբ, այլ խօսքով այդ համոզումը սուրիական հպատակութեան սուրիահայերու բարձր գիտակցութեան գործնականացումն էր:

Սուրիահայ քաղաքական միտքն անգամ չէր պատկերացներ վերջին տասնամեակի այս կացութիւնը, կամ նոյնիսկ այլ տարբերակներու մասին իսկ չէր մտածած, ոչ ալ կողմնորոշուած: Անվերապահօրէն հաւատալով, որ այդ միակուսակցական եւ առանց ընդդիմութեան քաղաքական դրութեամբ անխախտ վարչակարգը իր ուժեղ քաղաքականութեամբ, անփոխարինելի եւ երկայնակեաց է:

Այդ դատումին համակիրներէն էին նաեւ Եագուպիէի հայերու մեծամասնութիւնը, ուրիշ դատողութեամբ կարելի չէր պատկերացնել անոնց պետականամետ ըմբռնումը: Սակայն Ասատներու կառավարութեանց հանդէպ հաւատարմութիւնը ոչ միայն ընդունելի չէր, այլեւ փորձանք, զայրոյթ եւ թշնամանք էր իսլամ ծայրայեղականներու խուժաններուն եւ անոնց հովանաւորներուն համար, որոնց միակ նպատակը ամէն գնով տապալել էր Ասատի վարչակարգը, ուրեմն պետք էր կործանել ամէն կառոյց եւ խոչնդող խմբակներ կամ միաւորներ, մանաւանդ երբ անոնք քրիստոնէայ տարրերէ կազմուած են:

Տագնապի առաջին տարիներուն Եագուպիէի հայութիւնը գերծ մնաց սպանալիքներէ, առեւանգումներէ, բռնաբարումներէ, պղծումներէ եւ ոճիրներէ, որոնք ամենօրեայ իրողութիւններ էին: Ծայրայեղական իսլամականներ սկսած էին վայրագօրէն յարձակիլ քրիստոնէայ գիւղերուն վրայ եւ ներխուժել անոնց բնակարանները, կալուածներն ու արտերը: Ուստի Եագուպիէի հայերու դիմաց կը մնար երկու ընտրութիւն՝ կամ զանազան վտանգներէն արտահոսքին՝ հեռանալու գիւղէն, փրկելու համար իրենց կեանքը՝ անոնք ուրիշ միջոց չունէին: Զայեղը դիմադրութիւն կամ ապստամբութիւն չէին կրնար ցուցաբերել եւ չցուցաբերեցին: Եագուպիէի տարածաշրջանին մէջ տեղակայուած սուրիական պետական զօրաբանակն անգամ պաշարուած էր, բայց ճարպիկ ու արագ ձեւով մը այդ շրջաններէն դէպի ճրտըր Շղուր հեռացաւ, դաժան եւ աննկարագրելի բախումներու, ճակատամարտերու կուրծք տալու, ահաբեկչական վայրագ խմբաւորումներու գումարտակներուն դէմ: ճրտըր Շղուրը սարսափազդու մահաբեմ մը, անհաշիւ նահատակներու հողափոս մը հանդիսացաւ: Ո՛ր մնաց ափ մը անզօր եւ անզէն Եագուպիէի հայութեան ինքնապաշտպանութիւնը եւ կամ ընդդիմանալու այլընտրանքը, մանաւանդ այդ վիթխարի թիւով կատարի խուժաններուն դէմ:

Չրպարտութիւն, նեղմտութիւն է գրել կամ արտայայտուիլ մտածելով, որ դրացի քրիստոնէայ գիւղերու հոռոմներն ու լատինները չլքեցին իրենց հողերը, մինչդեռ Եագուպիէի հայ առաքելականները փախան իրենց գիւղէն: Իրականութիւն է նաեւ, որ հայերու կողքին դրացի գիւղերու հոռոմներն ու լատիններէն շատ շատեր, այնքան արագ լքեցին ամէն ինչ, փախուստի դիմեցին իրենց սեփական հողերէն, երբ ծայրայեղ իսլամականներ ներխուժեցին այդ քրիստոնէայ երեք գիւղերը: Նոյնը պատահեցաւ նաեւ Սուրիոյ հիւսիսային հայաբնակ զանազան շրջաններու մէջ, օրինակի համար Զեսապի պարագային կը կարդանք՝ «Բոլորը փախուստի կը դիմէին դէպի Էքիզօլուք, փախչող ընտանիքները ուղղակի կ'իջնէին Լաթաքիա,

ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ ՀՐԱՇՔ ՄԸ ԿՈՐԱՆՑՈՒՑ, ԲԱՅՑ ԵՐԿԻՆԵՐԸ ՆՈՐ ՀՐԵՇՏԱԿ ՄԸ ՈՒՆԵՑԱՄ

Ալեքս Սրկ. Գալայճեան

Կեանք ըստ «առեղծուած»-ը թաւալգլոր եւ ահեղավագ յորձանքի նման կ'ընթանայ: Տարիները, օրերը նոյնպէս հոսանուտ վտակի նման եւ իբրեւ անդարձ ժամանակ կ'անցնին: Ամէն մէկ պահը մեր կեանքի ժամանակին մէջ կ'ապրինք: Ժամանակի ալիքներուն վրայ կը նաւարկենք եւ օր մըն ալ մեր աչքերը փակած կը մեկնինք այս դժուարալից կեանքէն: Սա մեր բնութեան մէջ «գրուած օրէնք է»,



մեր «ճակտի գիրն է», ինչպէս պիտի ըսեր ժողովրդական առածը: Ժամանակին մէջ էր նոյնպէս 20 Յուլիս 2023-ը, որ շատերու միտքերուն եւ հոգիներուն մէջ դառնուեցաւ եւ մնաց իբրեւ սրտամկիկ օր մը, երբ մահ կոչուած չարանեց սաղայելը իր մագիլները արձակեց Ազնիւ Ստեփանեան-Լեպլեպճեանի վրայ:

Արդարեւ, մարդկային մտածողութեամբ կարելի չէ հաւատալ, որ մարդ այսքան հեշտութեամբ կրնայ հրաժարիլ կեանքէ մը, ուր հոգեւին եւ ողջ էութեամբ շրջանակ մը գինք այսքան գորովագին կը սիրեր: Շըրջանակ մը, որ իր ընդվզած ու սգաւոր սիրտը, այդ օր դառնակակիծ հաւաքներով քամեց արտասուաթոր արցունքով: Ժողովուրդ, որուն միասնական եւ հոգեբուխ աղօթքը, սիրելի Ազնիւի բիւրեղային հոգւոյն կողքին, այդ օր արդանեթոյն թեւածեց ամ Արարիչն Աստուծոյ:

Մեր Ազնիւը սիրոյ ու մարդասիրութեան հոսք էր, յարգանքի ու պարկեշտութեան ջրվեժ: Անձ մը, որ հասաւ բոլորին եւ միայն ու միայն մեր բաշխեց ամէնուր. անշահախընդիր եւ անհուն սեր՝ բոլոր-բոլորին նկատմամբ: Զինք ճանչցողները կը վկայեն, որ ան իւրայատուկ էր իր բարի հոգիով եւ ազնուութեամբ: Իր ծնողները գինք զուր տեղ Ազնիւ չէին կոչած, որովհետեւ ինք ազնուութեան մարմնացումն էր՝ բառին վաւերական առումով: Ահա թէ ինչն'ու խօսքին մեղմութիւնը, լեզուին բնածին քաղցրութիւնն ու մելանոյշ երաժշտականութիւնը, սիրալիր ու մտերմիկ յարաբերութիւնը, խօսակիցին նկատմամբ զգուշաւոր փակկանկատութիւնը, շուտով երեւցող ժպիտը, եւ իրմէ շատ անելի համեստ

կարողութիւն ունեցողներուն հանդէպ յարգալից վերաբերմունքը, բնականօրէն սիրելի դարձուցին զինք:

Այսպէս էր մեր Ազնիւը... Ըլլալու եւ ջըլլալու, ապրելու եւ չապրելու երկդէմ ու անբաժան այս իրականութիւնը դառնօրէն ճշմարիտ է, որ կը տագնապահարէ մեզ: Ինչքան մեծ ուրախութիւն էր խօսակցիլը անոր հետ, բայց նոյնքան սաստիկ ու ահռելի՝ անոր կորուստը: Զկայ բոլորիս կողմէ սիրուած Ազնիւը, բայց կան ու պիտի մնան իր բարեգործութիւնը, ծառայութիւնը, իր սրտախօսիկ խրատները, իր խօսքը, իր բառը...: Միթէ կը լեցուի՞ նորէն այս տեղը, կու գա՞ն նոյնատիպ վարքագիծ ու նկարագիր ունեցող Ազնիւներ: Այո՛, բայց մեր Ազնիւը տարբեր էր...

Ընտանիք մը այնքան առողջ է որքան այդ ընտանիքին մայրը իր սիրտն ու հոգին անոր կառնոյցին մէջ կը հիւսէ: Կինը, մայրը սիւնն է ընտանիքի իր սիրով, հաւատքով, նուիրումով, սրբութեամբ, ազնուութեամբ ու առաքինութեամբ: Իսկ առաքինի հայրը՝ ամրակառն ու անխորտակելի պարիսպն է ընտանիքին: Երբ տան մը սիւնն ու կառնոյցը ըլլան ամուր ու հաստատուն, այդ տունը կը մնայ անխորտակելի՝ ամենէն ուժգին փոթորիկներուն ու հարուածներուն իսկ դիմաց:

Ս. Կոյս Մարիամի առաքինութիւններով իր կեանքը շաղախած մեր բարի Ազնիւը, իր ամուսնոյն՝ Կիրակոսին հետ միասին, իր փոքրիկ ընտանիքը վերածեց սիրոյ բոյնի, խաղաղութեան յարկի եւ ազգային անհոգութեանց վառ օճախի: Ըսուած խօսք է, թէ «Մայրանայրը դիրիւն է, բայց մայր դառնալը գոհողութիւն է»: Ազնիւը ո՛չ միայն գոհող մայր եղաւ, այլեւ իսկական ընկեր մը, որ լսեց իր գաւակները, ինքզինքը նոյնացուց անոնց հետ եւ փորձեց իր չորս գաւակներուն՝ Անժելին, Յովիկին, Ալինին եւ Մեղրիին հոգւոյն մէջ ցանել քրիստոնեայ հայ մարդ ըլլալու արժեքները, սերմերը, որոնք իբրեւ ատոց հասկեր այսօր արդէն իսկ ծլարձակած են:

Բոլորս ալ գիտենք, որ Ազնիւը Հայ Եկեղեցւոյ կապուած գաւակ մըն էր: Եկեղեցին իրեն համար քրիստոնեական կեանքին նկարագիր տուող իրականութիւնն էր: Ինք սոսկ Եկեղեցիին չէր պատկաներ, այլ Եկեղեցին կ'ապրեր: Եկեղեցւոյ «անսքեմ» առաքեալն էր ան, ոչ թէ լոկ պաշտօնով, այլ ամբողջ էութեամբ, հոգեխառնութեամբ ու ապրումով: Հալէպի մէջ, Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի ճամբով մաս կազմեց բազմաթիւ մարմիններու եւ գործեց անանձնական ծառայութեամբ:


Ու հիմա, երբ բոլորս կորուստին ահազնութեան տակ ընկճուած ենք, պահ մը կ'ուզենք վերստին չհաւատալ սա դաժան իրականութեան,

ԳՈՎԵՐԳ ՅԻՍՈՒՄԱՍԷՐ Ս. ՇՆՈՐԱԿԼԻՆ

(Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետին վախճանման 850-ամեակին առիթով)



Խորեն Բնկ. Պերթիզեան



Դարեր անցան ժիր սերմնացան Կը մնաս վեհ, դէմք սրբագան Յիսուսասէր ձայն հայկական Մեր վերքերուն դեղ-բալասան:

Շարականով աղօթական Գովք հիւսեցիր օրհներգութեան Աղօթքներդ գրաւչական Եղան ազգու, ներգործական:

Շնորհընկալ միջնադարեան Մարդակերտման ներշնչարան Դուն պարծանքը մեր պատմութեան Յիշատակդ սուրբ տօնական:

Դուն Սուրբ Գիրքի սերտ սերտարան Հայադոշմ սաղմոսարան Խօսնակ ուղիղ դաւանութեան Ձերմ պաշտպանը ողջմտութեան:

Երանելի սուրբ ախոյեան Հոգեշահ գանձ տերունական Ընտիր մշակ, սիրոյ թարգման Պայծառամիտ աստուածաբան:

Հետքդ մնաց որպէս նշան Հրաշքներու հանդիսարան Հոգածութեան վկայարան Իբրեւ մասունք բիր օրհնութեան:

Կանչդ եղաւ կոչ արթնութեան Վարքդ պատկեր վայելչական Յորդորներդ այժմեական Կրօնաշունչ, բարոյական:

Մեր հաւատքի ամրապնդման Դերակատարն ես անպայման Մեր հոգեւոր պտղաբերման Օրհնեալ միջոցն ես անվարան:

Քրիստոսի խոնարհ ծառան Խոստովանող վաւերական Բարեհամբաւ հայր պատուական Յաղթող երթոյս ոսկեմատեան:

Կարիքն ունինք իմաստութեան Հոգեպարար խաղաղութեան Ընթացքովդ յուսադրական Կու տաս բարի լուր փրկութեան:

Կեանքդ օծուն լուսամատեան Ո՛վ դեսպանը Արքայութեան Յոյց տուիր դուն լոյսի ճամբան Որ անկեալներ Տիրոջ դառնան:

Տեր իմ Յիսուս, մեր սիրական Շնորհեցիր ողջ հայութեան Շնորհալի Ներսէս վկան Որ սիրենք քեզ անոր նման:

ըսելով թէ մահը ինչպէ՛ս կրցաւ այսքան հեշտութեամբ իր յաղթութիւնը հռչակել անմեղ ու բարի հոգիի մը վրայ: Միթէ անողոք դիպուած մը չ'էր պատահած...:

Որքան ալ փորձենք տարիամուգել մենք մեզ, հարցադրումներ կատարել, տրտմիլ, ափսոսալ եւ ընդվզիլ, ոչ մէկ բան պիտի փոխուի: Սա Ամենակալն Աստուծոյ կամքն է: Այնքան ատեն որ կը հաւատանք, թէ մահը մեր կեանքին վճարձակ դատաւորը եւ վերջակետը չէ, այն ատեն պետք է համոզուինք որ հրեշտականման մեր Ազնիւը չէ մեռած, այլ կը նիւրիւն մեզ կը դիտէ երկինքէն, որովհետեւ ինչպէս առաքեալը կ'ըսէ, թէ Քրիստոսի յարութեամբ «Մահը կլանուեցաւ, յաղթանակը շահուեցաւ» (Ա.Կր 15.54):

Եկեք ընդունինք, որ երկիր մուրակը հրաշք մը կորսնցուց, բայց երկինքը նոր հրեշտակ մը ունեցաւ: Սիրելի ու անմահ Ազնիւ, Ո՛վ քեզ չսիրեց: Տե՛ս, քեզ սի-

րողներդ, հարագատներդ, ընկեր-ընկերուհիներդ, ի՛նչ հարագատութիւն կայ այստեղ: Այսօր, արցունքները մաքուր են եւ իրական, թաց աչքերը այսօր անելի հարագատ են իրարու, այդ աչքերուն մէջ քու անունդ կ'աղերսուի, պատկերդ կը լուսագարդի. մաքուր աչքեր են՝ մաքրացած այն սերէն, որով դուն սիրեցիր:

Թէեւ, այսօր ֆիզիքապէս կը բաժնուիս մեզմէ, բայց քու անթառամ յիշատակդ, քաղցրահունչ ձայնդ, անմեղունակ ժպիտդ խորաքանդակուած պիտի մնան մեր սրբտերուն մէջ, որովհետեւ կը հաւատանք որ դուն չ'ես մեռած, այլ՝ կը ննջես:

Աւետարանը գեղեցկօրէն կ'ըսէ. «Հօրմէն եկայ եւ աշխարհ եկայ եւ այժմ կը ձգեմ աշխարհը եւ Հօրը կ'երթամ» (Յհ 16.28):

Այժմ երկնաւոր Հօրդ քովն ես, երկնային բնակարանիդ մէջ: Լոյս ու խունկ քու ազնուաբոյր հոգիիդ:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Միօրինակությունը դուրս եկե՛ք եւ ձեր ընկերներուն հետ հաճելի ժամեր ապրեցե՛ք բացօթեայ վայրի մը մէջ: Շաբաթը հանգստաւետ պիտի ըլլայ:



Ցուլ

Գործերու տարափ մը կը տեղայ ձեր գլխուն: Իրարանցումի մի՛ մատնուիք: Մարդիկ ձեր օգնութեան կարիքը ունին: Ընդառաջեցե՛ք:



Երկուորեակ

Շանր շրջան մը կ'ապրիք, բայց ի վերջոյ պիտի յաղթահարէք զայն: Մօտիկ ազգականի մը աջակցութիւնը պիտի վայելէք եւ հոգեպէս հանգստանաք:



Խեցգետին

Հեռուոր բարեկամ մը ձեզ մէջ լուր կը սպասէ: Մի՛ անտեսէք զայն, այլ փութացե՛ք օգնելու անոր: Ձեր առողջութեան ալ հոգ տարե՛ք:



Առիւծ

Տաճանակիր աշխատանքէ ետք նիւթապէս պիտի վարձատրուիք: Ընտանիքի անդամներուն հետ կարճ հանգիստի մը պիտի երթաք եւ զուարճանաք:



Կոյս

Հոգեկան գերճնշումները ձեր հոգին կը տկարացնէ: Ամուր պահեցե՛ք դուք ձեզ, որպէսզի չհիւանդանաք: Ի վերջոյ ձեր արեւը պիտի շողայ եւ դուք երջանիկ ըլլաք:



Կշիռ

Ձեր նպատակները իրագործելու համար յոյսով ապրեցե՛ք եւ անդադար աղօթեցե՛ք: Բարեսիրտ էք եւ աշխատասեր: Ձեր ընտանիքին փայլուն աստղն էք:



Կարիճ

Ձեր ծրագրներուն լրջութեամբ հետեւեցե՛ք եւ նիւթական մսխումներ մի՛ կատարէք: Ամառնային արձակուրդը հաճելի վայրի մը մէջ պիտի անցընէք:



Աղեղնաւոր

Յարգումով ու սիրով անհատականութիւն մը ունիք: Բարեկամներ յաճախ ձեր աջակցութիւնը կը վայելեն: Ձեր խելամտութեան շնորհիւ պիտի գնահատուիք:



Այծեղջիւր

Վեհ նպատակներ կը հետապնդէք ու մեծ երազներով կ'ապրիք: Կեանքը հաճելի է իր բոլոր ելեւէջներով: Իւրաքանչիւր վայրկեանը գնահատեցե՛ք:



Ջրհոս

Հանրային վայրի մը մէջ նոր բարեկամի մը պիտի ծանօթանաք, որ թեւ ու թիկունք պիտի կանգնի ձեզի: Ձեր գործերը յաջողութիւն պիտի գտնեն եւ գնահատուին:



Ձուկ

Ձեր ներկայութեամբ պիտի խանդավառուէք ձեր շուրջիները եւ զուարճալի պահեր ապրիք: Շաբաթը լի է նորատես հաճելի անակնկալներով:



Խ Ա Վ Ղ Ո Ղ Օ Ր Հ Ն Է Ք



Դրախտէն արտաքսուելէն ետք, քանի որ մարդը իշխան էր կարգուած ամբողջ երկրի վրայ, ուստի անոր անիծուելով՝ կ'անիծուի նաեւ իր ամբողջ իշխանութիւնը, այսինքն ամբողջ երկիրը՝ իր կենդանիներով ու բոյսերով հանդերձ: Իսկ երբ Միածին Որդին գալուստով կրկին կ'օրհնուի մարդկային բնութիւնը, վերստին կ'օրհնուին նաեւ բոլոր արարածները: Սակայն բոլոր պտուղներէն աւելի կ'օրհնուի խաղողի ողկոյզը, քանի որ Տէրը խաղողի որթը, ամենագօրաւոր ծառերէն աւելի վեր բարձրացուց եւ պատուեց աւելի քան միւս տնկիւները՝ Իրեն Խաղողի որթ անուանելով՝ «*Ես եմ ճշմարիտ որթատունկը*» (Յհ 11. 1): Իսկ Տիրոջ սիրով կապուածներուն ճիւղեր անուանեց եւ Հօրը՝ Մշակ, որպէսզի Հայրը յօտելով որթատունկը՝ այն պտղաբեր դարձնէ, իսկ յօտուած ճիւղերը յաւիտենական կրակի նիւթ դարձնէ: Այնուհետեւ գինին՝ խաղողի արիւնը, Միածին Որդին Իր փրկական Արեան նիւթը ըրաւ եւ Վերնատան մէջ օրհնեց՝ ըսելով. «*Սա է Նոր ուխտի Իմ Արիւնը*» (Մտ 26. 28), որով մենք ազատեցանք մեղքերու ծառայութենէն ու մահէն:

Այդպիսով խաղողը կրկնակի օրհնութեան արժանացաւ՝ օրհնուելով եւ առաջին արարչութեան ժամանակ, եւ երկրորդ, եւ ամեն տարի որպէս մեր հանդերու ու այգիներու երախայրիք կը նուիրենք Աստուծոյ:

Այդ պատճառով ալ սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնին, պատարագէն ետք, կը կատարուի Խաղողօրհնեցի արարողութիւնը, որուն ժամանակ սարկաւազի քարոզով կը գոհանանք բարերար Աստուծմէ, մեզ առատապէս պարգեւած՝ հանդերու ու այգիներու բերքին համար եւ կը խնդրենք, որ Ան օրհնէ տաճարին ընծայուած խաղողները Իր սկզբնական օրհնութեամբ: Միաժամանակ կը դիմենք սուրբ Աստուածածնայ բարեխօսութեան, որուն միջոցով մեզի տրուեցաւ կեանքի եւ անմահութեան Պտուղը՝ Յիսուս Զրիստոսը:

Խ Ա Վ Ղ Ո Ղ Ի Ն Օ Գ Տ Ա Կ Ա Ր Յ Ա Տ Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր Ը

Խաղողը հարուստ է օգտակար տարրերով՝ C, E, P, B կենսանիւթերով, նաեւ կը պարունակէ գէնք, պղինձ, երկաթ, կիր, փոթափոմ, մակնիգիում, մանկանեզ, պոր, եոտ եւ այլն: Ձերմուտը ըստ խաղողի տեսակին կը տարբերի. որքան քաղցր է խաղողը, այնքան բարձր է ջերմուտը:



Խաղողը իր հարուստ բաղադրակազմին շնորհիւ օգտակար է առողջութեան: Անոր մէջ գտնուող մանրաթելերը կը պայքարին քաղցկեղածին բջիջներու դէմ, կը դանդաղեցնեն ծերացման գործընթացը:

Խաղողը կը նպաստէ դիմադրողական համակարգի ամրացման, կը բարելաւէ ստամոքսաղիքային համակարգի աշխատանքը, կը նուազեցնէ ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի առաջացման համասեպականութիւնը, նաեւ դրականօրէն կ'ազդէ միզասեռական համակարգի առողջութեան:

Խաղողը կը յագեցնէ մանուկներուն մարմինը կենսանիւթերով, որոնք կարելի է դիմադրողական համակարգին, տեսողութեան, ջղային համակարգին համար:

Այնուամենայնիւ, պէտք է յիշել, որ խաղողը կը պարունակէ մեծ քանակով շաքար, հետեւաբար ալ վնասակար է անօթներու պատերուն:

Խաղողի օգտագործումը պէտք է սահմանափակեն շաքարախտէ տառապողները, նաեւ նիւրախալ փափաքողները:



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԵՑՄԻ ՆԱԵՒ ԱՐՑՄԵՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, 5 Օգոստոսին, Կիևի Շիրակի քաղաքային մարզադաշտին մեջ տեղի ունեցավ Համահայկական ամառնային 8-րդ խաղերուն բացման հանդիսաւոր արարողութիւնը:

Բացման շքերթին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ 8 ամիս շրջափակման մեջ գտնուող Արցախի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի պատուիրակութիւնը:



Ստեփանակերտի մարզիկները պիտի մասնակցին 6 մարզաձեւերու:

Հանդիսութեան ներկայ եղան Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրեան, քաղաքական անձնաւորութիւններ, կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարի տեղակալ Կարէն Գիւլյեան, օրէնսդիր եւ գործադիր մարմիններու անդամներ, պաշտօնատարներ եւ այլ անձեր:

Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Չաքարեան ըսաւ, որ Համահայկական խաղերը այս 25 տարիներուն ընթացքին դարձան միասնութեան, եղբայրութեան, սիրոյ եւ համերաշխութեան իսկական պատգամներ՝ այսօրուան եւ գալիք սերունդներուն համար:

Յատկանշականը այն էր, որ այս խաղերուն առաջին անգամ ըլլալով իրենց մասնակցութիւնը կը բերեն Չիլիի, Շուէտի, Սեուտական Արաբիոյ, Ղազախստանի, Հնդկաստանի, Յորդանանի եւ Եսթոնիոյ հայրենակիցները:

Խաղերուն ջախջ վառեց յունահռոմեական ոճի ըմբիշ, ողիմպիական խաղերու ոսկիէ, արծաթէ եւ պրոնզէ մետալակիր, աշխարհի քառակի եւ Եւրոպայի վեցակի ախոյեան Արթուր Ալեքսանեան:

Մինչ այդ, Համահայկական խաղերու դրօշը մարզադաշտ բերին ողիմպիական ախոյեաններ Իսրայէլ Միլիտոսեան, կրկնակի ողիմպիական ախոյեան Արմէն Նազարեան, Թոքիոյի ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր, աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Արթուր Դաւթեան, Թոքիոյի ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր Յովհաննէս Բաջըով, աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Նազիկ Աւդալեան եւ Եւրոպայի կրկնակի ախոյեան Մալխաս Ամոյեան:

«Միասնութիւն մարմնամարզով» կարգախօսով տեղի ունեցող Համահայկական խաղերուն կը մասնակցին 41 երկիրներու, 181 քաղաքներու շուրջ եօթը հազար մարզիկներ: Սուրիոյ պատուիրակութիւնն ալ մաս կը կազմէ խաղերուն:

Նշենք, որ 19 մարզաձեւերուն մեջ առաջին անգամ ըլլալով նկատի առնուած է նաեւ աղջկանց ֆութպոլը:

Համահայկական խաղերուն հովանաւորներն են «Ֆասթ Պանք»-ն ու «Ֆասթ Շիֆթ»-ը:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 450)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլքարոյեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												■
2			■		■			■		■		
3		■										
4				■				■				
5									■			
6	■			■				■				
7									■			
8		■		■			■					
9				■			■				■	
10	■					■						■
11				■					■			
12			■			■						

Հորիզոնական

1- Ս. Աստուածածինի Վերափոխման տաղաւար տօնին կատարուող արարողակարգ:

2- Յարաբերական դերանուն: Տառի մը անունը: Կրկնուած ձայնաւորներ:

3- Հակառակ՝ անփորձ: Սկսուտական բանակումները բնորոշող փայտեայ սիւն:

4- Ճամբայ: Աշակերտ: Տառի մը անունը:

5- Նոր ամուսնացած: Գոյութիւն ունին:

6- Կրկնուած ձայնաւորներ: Տառի մը անունը:

7- Հայեացք: Մէկը: Չայնաւոր տառեր:

8- Խառնատառ՝ առանց աղի:

9- «Իմ Հայրիկ» երգին հեղինակը:

10- Յոգնակերտ մասնիկ: Իգական անուն:

11- Միայն: Ծունկին ետեւի կողմը:

12- Ցաւի ճիչ: Հանքային համեմ: Կոհակ:

Ուղղահայեաց

1- Հոծ: Արեւագալ: Չայնանիշ:

2- Տարածքի միաւոր: Չայնաւոր տառեր: Զէն:

3- Թունաւոր բոյս:

4- Երէ: Հակառակ՝ անձնական դերանուն:

5- Վահան: Սևտուկ:

6- Մահամերձ:

7- Հակառակ՝ անպաշտպան: Ոչխարի բուրդ՝ խուզուած ու մաքրուած:

8- Լաւաշ հաց:

9- Հակառակ՝ թաքուն պայթուցիկ: Խառնակ վիճակ:

10- Հակառակ՝ աղբիւր: Մտապատկեր:


11- Կազմալուծել:

12- Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Աղքատը հացի կարօտ է, հարուստը՝»: Եական բայ:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 449)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	յ	ն	շ	ք	ա	յ	ն	մ	է	զ	
2	ր	ի	ա	ի	ն	ա	ա	ր	ա			
3	տ	ք	ն	ա	ն	կ	ա	ի	ք			
4	ա	ա	թ	ա	ն	ա	ա	ւ	է			
5	ի	ն	ա	ա	տ	ն	ա	ն	զ			
6	ն	ա	հ	հ	է	ր	ի	ք	ի			
7	ւ	կ	ա	ր	ա	ա			յ	ն		
8	ր	ա	ք	ք		փ	ա	ր	ա	ի		
9	ա	ն	ձ	ն	ն	ն	ր	ք	ա			
10	կ	ի	լ		ա	ր	ի	ի	ժ			
11	տ				ն	ք	է	լ	ա			
12	հ	ա	զ	ն	ւ	ս	ի	ն	ա	կ		

ԼՈՒԾՈՒՄ



Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԵՒ ՀԱԼԵՊԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԶՈՅՎ ՏՕՆԵՐԸ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆՊԻՍԱԽՐ ՊԱՏԱՐԱԳՈՎ

Հալեպի մէջ աւանդաբար Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին նախորդող Կիրակի օրը, Սրբազան Զօր նախագահութեամբ Աստուածամօր Վերափոխման տօնը կը յիշատակուի եւ խաղողօրինէք կը կատարուի:

Արդարեւ, Կիրակի, 6 Օգոստոս 2023-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին եւ համանուն եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Հալեպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եպիսկոպո-



սական հանդիսաւոր Պատարագ մատուցեց, ներկայութեամբ՝ Ազգ. Վարչութեան անդամ Մանուէլ Տեր Մանուէլեանի, ազգայիններու, Հալեպի եկեղեցիներու թաղական խորհուրդներու եւ մեծաթիւ հաւատացեալներու:

«Հրաշափառ» շարականի երգեցողութեան ներքոյ, թափօր կազմած Սրբազան Զօրը մուտք գործեց եկեղեցի: Սրբազան Զօր առընթերականներն էին՝ Զոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան եւ Արժ. Տ. Չա-

կոնդակը, ուր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետ ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Զօր խնդրանքին, եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Չարեհ Զինյ. Շաքարեանին կը շնորհէ ծաղկեայ փիլոն կրելու արտօնութիւն, որ խթան պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու քահանայական իր ծա-



ռայութիւնը հայ եկեղեցւոյ անդատանէն ներս:

Առաջնորդ Սրբազան Զայրը ժողովուրդին ուղղեց իր հայրական պատգամը, բնաբան ունենալով օրուան շարականի բառերը. «Այսօր եկեղեցւոյ զաւակներն ալ երկրի վրայ ուրախութեամբ կը տօնեն Կոյսին վերին Երուսաղէմ քաղաք փոխադրուիլը»:

Սրբազան Զայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը ցնծութեան տօն է մեզի համար, որովհետեւ Վերափոխման դէպքին մէջ պարփակուած կը գըտնենք մարմնաւոր մահէն ետք կեանքի շարունակականութեան իրողութիւնը, այլ իսօքով Յաւիտենական Կեանքի ապացոյցը, որ Զրիստոս



րեհ քինյ. Շաքարեան: Օրուան խորհուրդին համահունչ հնչեցին Ս. Աստուածածնայ նուիրուած շարականներ, եկեղեցւոյ դպրաց դասին հոգեպարար կատարողութեամբ:

Առաջնորդ Սրբազան Զայրը խաղողօրինէքի աւանդական արարողութիւն կատարեց, օրինելով խաղողի ողկոյզները:

Այնուհետեւ, ընթերցուեցաւ Վեհափառ Հայրապետին սրբատառ

խոստացաւ տալ բոլոր իրեն հաւատացողներուն: Աւելին, Սրբազան Զայրը Վերափոխման տօնին ընդմէջէն անհրաժեշտ նկատեց մեր ուշադրութիւնը կեդրոնացնել Աստուածամօր անձին վրայ, որ իր նկարագիրով եւ վարքով մեծագոյն օրինութիւնը եւ բարիքը դարձաւ եւ նոր հունաւորում, գոյն եւ որակ տուաւ մարդկային կեանքին:

Մակար Սրբազան Ս. Կոյս Մա-

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՍՕՏԵՆ ԿԸ ՀԵՏԵԻ ԱԶԳ. ՄԻԱՅԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

Հինգշաբթի, 3 Օգոստոս 2023-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան այցելեց Ազգ. Միացեալ Վարժարան, ուր մօտէն հետեւեցաւ ընթացք առած վերանորոգութեան աշխատանքներուն:

Սրբազան Զօր կ'ընկերակցէր Զոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան: Սրբազան Զայրը դիմաւորուեցաւ Ազգ. Վարչութեան անդամ երկրչփ. Յարութ Աւընեանի, շինարարական աշխատանքներու Թեմի լիազօր



երկրչփ. Տիգրան Պետրոսեանի եւ Զոգաբարձութեան ներկայացուցիչ Արա Աբրշեանի կողմէ: Երկրչփ. Տիգրան Պետրոսեան մինչեւ օրս ի գործ դրուած վերանորոգութեան աշխատանքներուն մասին զեկուցեց Սրբազան Զօր:



Մակար Սրբազան շրջագայելով վարժարանի գանազան բաժիններէն ներս, մօտէն ծանօթացաւ այնտեղ տարուող վերանորոգութեան աշխատանքներուն, որոնք ընթացք առին Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին (MECC) համագործակցութեամբ, Հոլանտական Եկեղեցիներու Խորհուրդին (KIA) նիւթական ներդրումով եւ Ազգ. Առաջնորդարանի օժանդակութեամբ:

Մակար Սրբազան իր հայրական օրինութիւնները փոխանցեց եւ գնահատեց շինարարական աշխատանքներուն հսկող պատասխանատուներուն եւ աշխատող անձնակազմին հետեւողական եւ արագընթաց աշխատանքը եւ իր ուրախութիւնը յայտնեց վերամուտին ամբողջութեամբ նորոգուած կառոյցէն ներս աշակերտները ընդունելու կապակցութեամբ:

րիամը բնորոշող երեք կարեւոր կետեր մատնանշեց.-

ա. Զաղցրահամ պտուղը իր որովայնին մէջ կրեց եւ գայն մարդկութեան հայթայթեց:

բ. Անմահական եւ կենսատու հացը ընդունելով գայն մատակարարեց մարդկութեան:

գ. Կեանքի լոյսը բովանդակեց եւ ի ներքուստ ճառագայթեց գայն:

Այլ իսօքով, Ս. Կոյս Մարիամ դարձաւ իմանալի լոյս եւ իմանալի Արեւելք, դառնալով Արդարութեան Արեգակին բնակավայրը:

Սրբազան Զայրը ներկայ դժուար պայմաններուն մէջ Աստուածամօր բարեխօսութիւնը հայցեց հայ ժողովուրդին, ընտանիքներուն, սուրիական հայրենիքին, անոր Վսեմաշուք Նախագահին եւ բանակին, Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի բարօրութեան համար:

Մակար Սրբազան շնորհաւո-

րեց Մարիամ եւ անոր հոմանիշ անուններ կրող հայորդիները, բոլորին մաղթելով առողջ եւ արեւշատ տարիներ:

Պատարագէն ետք հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ՝ ննջեցեալներու հոգիներուն խաղաղութեան համար:

Աւարտին, Սրբազան Զայրը թափօրով ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ շրջափակ, ուր «Կիլիկիա» մաղթերգը երգուեցաւ:

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Թեմի Ազգ. Կրօնական ժողովը պատրաստած էր Աստուածամօր պատկերով եւ աղօթքով բացիկներ, որոնք Հալեպի եկեղեցիներուն մէջ բաժնուեցան հաւատացեալ ժողովուրդին:

Ինչպէս նաեւ, եկեղեցւոյ Տիկնանց յանձնախումբը օրինուած խաղողի ողկոյզներ բաժնեց ժողովուրդի զաւակներուն: